№ 130 ՈՒՐԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 16

1906

ԵՐԵՍՈՒՆԶՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 16 № 130

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները ամեն տեղ 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄԱՆԹԱՇԵԱՆԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ

սրանով յայտարարում է, որ այս տարվայ սեպտեմբերի 1-ից բացվում է երեք պատրաստական դասատուն: Այդ դասարաններում ընդունելութիւնը կը կատարվի քննութիւնով: Պատրաստական դասատունները մտնելու համար կանոնները և ծրագիրները կարելի է ստանալ առևտրական ուսումնարանի շինութեան մէջ՝ Հալաբար Պրովիանտսկի հրապարակ, ամեն օր ցերեկվայ ժամը 9-ից մինչև 1 ժամը: Ուսման լիակատար ընթացքը 6 տարվայ է: Պատրաստական դասարաններում ուսման տարեկան վարձը քառասուն (40) րուբլի է, Ընդունելութեան քննութիւնների երբ լինելու մասին առանձին կը յայտարարվի:

(ու.կ.ե.) առ 1—5

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԱԻԱԳԻ ԸՆԿԵՐ
ԵՐԿԱԴԻՍ ՆԱԶԱՐՕՎԻՉ ՄԻԼՕՎԸ

խնդրում է Թիֆլիսի պ.պ. արդիւնաբերողներին, վաճառականներին և առևտրականներին, որոնք առևտուր են անում առաջին 3 կարգի պրոմիսլային վկայականներով, շնորհ բերել ընդհանուր ժողովին, որը կայանալու է կիրակի, յունիսի 18-ին, առաւօտեան ժամը 11-ին, Թիֆլիսի Ժողովարանի ձմեռային շինութեան դահլիճում (Գօլօվինսկի պրօսպ. տուն Մանթաշեանի) Թիֆլիսի առևտրա-արդիւնաբերական միութեան նախագծի դրութիւնը քննելու համար:

առ (հ.ու.չ.) 2—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ուսուցչական կազմակերպութիւնը. Վերջին տեղեկութիւններ. Շարժումներ. Սուրմալուի դէպքերը. Մամուլ. Ուսուցչական ժողովից. Ժանտախտի դէմ մաքառում. Անվերջ տատանումներ. Դպրոցական ցաւերից. Շարունակենք. Մէկը քարեգլուխներից. Կատակ թէ հաշտութիւն. Ռէակցիայի կողմը չէ՞ք. Երէկվայ պատմութիւնը կրկնվում է. Ժողովրդական յուզմունքները Պարսկաստանում. Կամ դուք կամ մենք. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Գերմանիայից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

I

Երէկ բացվեց Թիֆլիսում ուսուցչական ժողով:

Ուսուցիչները հաւաքվել են խորհրդակցելու իրանց կարիքների մասին և կազմակերպելու մի ընդհանուր միութիւն փոխադարձ օգնութեան և աջակցութեան համար:

Ուսուցիչների համախմբվելը և միութիւն կազմելը տրամաբանական մի պահանջ է մեր օրերի համար, երբ հայ դպրոցների դռները լայնարձակ բացվում են և բազմաթիւ երիտասարդներ պէտք է նուիրեն իրանց ուսուցչական ասպարէզին:

Առաջ էլ երբ մենք դպրոցներ ունէինք, կար այդ միութեան պահանջը, բայց նա իրականանալ չէր կարողանում զանազան պատճառներով: Իսկ այժմ նա արդէն մօտենում է իր իրագործութեան և Թիֆլիսում ժողովվածները հրաւիրված են քննելու պատրաստ ծրագիր, որ դրված է նրանց առաջ:

Ուսուցչական միութիւնը կարող է բարի գործ կատարել, եթէ նա արդարև նայէ գործին այն լրջութեամբ, որը անհրաժեշտ է ըստ էութեան:

II

Մինչև այժմ ուսուցիչները չունէին մի մարմին, որ նրանց համախմբէր, որ կարողանար միջնորդ հանդիսանալ նրանց և զանազան տեղերի հոգաբարձութիւնների մէջ, որ օգնէր նրանց ամենակարևոր րոպէներում, թէ խորհուրդներով ու զանազան ցուցումներով և թէ նպաստներով ու օժանդակութիւններով:

Ուսուցիչները յաճախ դիմում էին այս կամ այն խմբագրութեան և մենք ականատես ենք եղել, ինչպէս տարիներ շարունակ լրագրական խմբագրութիւնների մէջ կազմվել են ժամանակաւոր բիւրոներ, բանակցութիւններ վարելու ուսուցիչների և հոգաբարձութիւնների մէջ:

Այժմ, երբ կազմվում է ուսուցչական միութիւն, անկասկած գործը կը ստանայ կանոնաւոր կազմակերպութիւն և նա այլ ևս կախված չի լինիլ այս ու այն պատահական հանգամանքներից:

III

Ուսուցիչների միութեանը, սակայն, մենք տալիս ենք փոքր ինչ ուրիշ նշանակութիւն, քան միւս արհեստակցական կամ պրոֆեսիոնալ կազմակերպութիւններին:

Ուսուցիչները մտաւոր մշակներ են, կոչված են մի շատ վեհ և խոշոր հասարակական նշանակութիւն ունեցող կարիքի բաւարարութիւն տալու: Ուսուցչին վերապահված է մի նշանաւոր դեր—կրթութեան և լուսաւորութեան կանթեղներ վառել մեր երկրի ամեն մասերում, ամենահեռաւոր խուլ անկիւններում: Եւ եթէ գերմանական ուսուցչին վերագրեցին յաղթանակը ֆրանս-պրուսական պատերազմում, իսկ ճապօնական ուսուցչին ռուս-ճապօնական պատերազմում, հասկանալի է, որ մենք գործ ունենք մի այնպիսի աշխատաւորի հետ, որից հասարակութիւնը ունի շատ մեծ լուրջ պահանջներ:

IV

Եթէ այդ պահանջները էական են և շատ լուրջ, անհրաժեշտ է, որ մի կողմից հասարակութիւնը ինքը հոգատար լինի իր այդ աշխատաւորների համար, իսկ միւս կողմից, որ ինքը ուսուցիչը լաւ հասկանայ, որ նա միայն մի աշխատաւոր չէ հանդէս գալիս, այլ որ նա պէտք է լինի որոշ յատկութեան աշխատաւոր, որոշ կոչման ծառայելու ընդունակ աշխատաւոր:

Եւ, անկասկած, ուսուցչական շրջանում եղած խոշոր արատները վարկաբեկ կարող են անել կրթական գործը ժողովրդի մէջ: Ուստի և ուսուցչական համախմբումը և միութիւնը պէտք է մշակէ ամեն տեսակ միջոցներ բարձրացնելու ուսուցչական դասի բարոյական և մտաւոր մակերևոյթը:

Եւ դրա համար նա պէտք է մշակէ մի շարք միջոցներ թէ ինքնակրթութեան և թէ այլ տեսակի:

V

Եթէ հասարակ արհեստաւորի գործունէութեան գնահատողը նրա պատրաստած արդիւնքների սպառողն է և շուկայի գինը, ուսուցչական գործում բանը փոքր ինչ ուրիշ կերպ է: Այստեղ ուսուցչական աշխատանքի արդիւնք սպառողը մանուկ սերունդն է և գնահատութիւնը ամեն անգամ հաշուի չէ ենթարկվում:

Եւ ցանկալի է, որ առաջին նախաձեռնիչը այդ արդիւնքի բեղմնաւորութեան լինի ինքը ուսուցչական դասը, համարելով դա և պատուի և կոչման խնդիր:

Մենք առիթ ունեցանք ներկայ լինելու ուսուցչական ժողովի առաջին նիստին և մեր այս մի քանի խորհրդածութիւնները ներկայացնել նրա ուշադրութեան:

Այս հարցին մենք կը վերադառնանք:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Գանձակ, 13 յունիսի

Կօլոնիայի ճանապարհին, հայերի և գերմանացիների այգիների կից «Կէնտ Ջինարի» անունված տեղում այսօր, կէսօրին, մորթել են մի 13 ամեայ ղարադաղլուեցի պատանու:

Երկու հոգի են եղել նրանք, երկու անմեղ պատանիներ, արածացնելիս իրանց գոմէշները: Նրանք բարձրանում են Արաֆլուի առուից ջուր խմելու, ու մօտակայ թթի ծառի տակին թութ ուտում և նստում ծառի ստուերում: Այդ պահուն, ինչպէս պատմել է սպանվածի ընկերը, մօտակայ գերմանացու այգուց դուրս է գալիս մի թուրք, դաշոյնով միայն զինված ու դիմում է դէպի նրանց: Սկզբում նրանցից հաց է պահանջում,—տալիս են: Հացը ստանալուց յետոյ մօտենում է պատանուն, մէկը փախչում է, միւսին բռնում է թուրքը: Փախչողն յետ նայելով տեսնում է, որ թուրքը դաշոյնով կտրեց պատանու ձեռքն, ապա դաշոյնով մորթեց նրան:

Ջարդգործը, ինչպէս լսեցի, տարել է պատանու ձեռքը:

Ինչպէս լսեցինք, մօտ ապագայում տեղից գնալու է պլաստունների գունդը, որն, ի դէպ է ասել, մինչև օրս իրան շատ օրինաւոր է պահել:

Ասում են՝ պլաստունների տեղը գալու են զինւորներ:

Շոգերը մեղմանում սկսվել են, բայց ամարանոց գնացողներ չը կան: Կարծվում է, որ ամենից ապահով տեղը Գանձակն է:

Ինչպէս լսեցինք, Փոխարքան յարգելով հայ և թուրք հասարակութեան խնդիրը, հրամայել է նահանգապետին այս տարի Հաջիքենդ ամարանոց չը գնալ:

Սագան

Կարբի (Վաղարշապատի գաւառ), յունիսի 11-ին

Այսօր, ժամը 10-ին, մեծ իրարանցում սկսվեց գիւղում. լսվում էին հանդից հրացանների ձայներ: Լուր բերին, թէ գիւղի հանդին՝ Քօլյա-Կարբուն շրջապատել են թուրքերը և տաւարը տարել: Պարզվեց, որ Մողնու հանդում թուրքերի և հայերի մէջ հրացանաձգութիւն է տեղի ունեցել. զոհեր չը կան, բայց թուրքերը պահանջում են մէկ մարդու, որը, իրանց ասելով, կորել է այդտեղից: Դեռ ճշտված չէ թուրքերի պահանջը: Դէպքի տեղը հասաւ Աշտարակի պրիստաւ Դումբաձէն, որի ձեռք առած եռանդուն միջոցներից ամեն ինչ իսկոյն դադարեց: Բայց հարևան թուրք և հայերի յարաբերութիւնները սաստիկ լարված են: Այսօր թուրքերը երբեմն-երբեմն արձակում են հրացաններ. Աբարանից դէպի Վաղարշապատ տանող ճանապարհը համարեա կապ է: Գիւղացիների դաշտային աշխատանքները դադարել են: Արդեօք վերջ լինելո՞ւ է սրան:

Հ. Գասպարեան

Ժամանակաւոր գեներալ-նահանգապետ Գօլօշչապօվը յունիսի 12-ին Շուշուց հեռագրում է Կովկասեան Փոխարքային. «Թարթառից ստացայ հետևեալ հեռագիրը. «Ջինլինցիներից և սարօվցիներից բաղկացած 70 պատուիրակներ գաւառապետի ներկայութեամբ երդվում են ձեռք գերադասութեանը ապրելու այսուհետև հաշտ ու բարեկամաբար: Մենք, սարօվցիներս, պարտաւորվում ենք աշնանային աշխատանքների սկզբում, ամիս ու կէսից յետոյ, վերադառնալ մեր գիւղերում, իսկ մենք, ջինլինցիներս, ստորագրութիւն ենք տալիս պահպանել նրանց: Մեր կայացրած համաձայնութեան մասին խնդրում ենք զեկուցանել Փոխարքային: Պատուիրակներ՝ Գրիգորեան, Առուստամ Գրիգորեան, Բաբայեան, Կարակուրշիկօվ, Աշուրօվ Ալիբէգօվ»: Իմ կողմից բոլոր սրտով շնորհակալութիւն յայտնեցի ջինլինցիներին և սարօվցիներին նրանց յօժարակամ տուած լաւ օրինակի համար:

Երկրորդ անգամ զեկուցանում եմ, որ շատ գանգատներ ու խնդիրներ եմ ստանում, թէ գրաւոր և թէ հեռագրական, և լրագիրների մէջ էլ լոյս են տեսնում հեռագիրներ ու թղթակցութիւններ, որոնք յաճախ լինում են կամ շատ չափազանցրած կամ բոլորովին ստայօդ: Օրինակ՝ երէկ պրիստաւը ուղարկվեց կէս հարիւրեակի և օֆիցէրի հետ միասին քոչատեղերը հայ գերիներին որոնելու և կողոպտված իրեղէնները խլելու համար: Մուսուլման քոչւորները հանդիպեցին կօզակներին հրացանաձգութեամբ և, չը նայելով, որ կօզակները նրանց պատասխանեցին նոյնպէս հրացանաձգութեամբ, այնուամենայնիւ քոչւորները շարունակում էին հրացան արձակել կօզակների վրա և այն միջոցին, երբ վերջիններս խուզարկում էին վրանները:

Մինչդեռ ուղարկված հեռագրի մէջ, որին ստորագրել են նրանց լիազօրները, ասված է, որ կօզակները հրացան էին արձակում խաղաղ ազգաբնակութեան վրա, վիրաւորում էին կանանց և գողացան շատ իրեղէններ: Իմ հարց ու փորձի ժամանակ հեռագրին ստորագրող լիազօրները հրաժարվեցին այդ բոլորից, յայտնելով, որ հեռագիրը սխալ են թարգմանել ռուսերէն լեզուով: Այդպիսի զրպարտութիւններ ստանում եմ ամենայն օր: Կարգադրված է որոնել յանցաւորներին, որոնք, ուրիշների համար իբրև օրինակ, կը պատժվեն: Թէև արդէն հաշտութիւն է կայացել և երէկ հայ ու թուրք ընտրեալները Աղդամ էին գնացել, ուր նրանց խնդրանօք գնացել էի և ես քաղաքագլխի հետ միասին, բայց և այնպէս ես դեռ նկատում եմ, որ մեծ անվստահութիւն է տիրում երկու կողմերի մէջ: Դրա գլխաւոր պատճառը իմ կարծիքով այն է, որ գերիներին փոխադարձաբար չեն վերադարձրել: Երկու կողմերն էլ յայտնում են, որ իրանց յայտնի է թէ որտեղ են գտնվում նրանք: Իսկ մինչև այժմ որոնումները ոչ մի հետևանք չեն տուել: Հէնց որ կորածների ազգականները յայտնում էին ինձ, որ իրանց յայտնի է գերիների գտնված տեղը, ես իսկոյն այնտեղ էի ուղարկում իւրաքանչիւր անգամ ոստիկանութիւնը կօզակների հետ, բայց և այնպէս չը նայելով մանրամասն արված տեղերում խնամքով կատարված խուզարկութիւններին, գերիները չէին գտնվում: Քաղաքում և խճուղու վրա բոլորովին հանգիստ է»:

Սուրմալուից յունիսի 13-ին մեզ գրում են, որ հայ-թուրքական ընդհարումները դադարելուց յետոյ, թուրքերը ջուր չէին բաց թողնում Արաքսից հայ գիւղերի համար, որից ցանքերը սկսվել էին սաստիկ փչանալ: Սակայն գաւառապետ Իոնինի ձեռք առած արտակարգ միջոցների շնորհիւ, որին մի և նոյն ժամանակ աջակցում էր զօրքերի հրամանատար գնդապետ Շլիտտերը, այսօրվանից ջուրը սկսեց ազատ կերպով գալ դէպի հայ գիւղերը:

Ժողովուրդը անչափ շնորհակալ է գաւառապետ Իոնինից և գնդապետ Շլիտտերից, և վստահ է, որ նրանց անկողմնակալ վարմունքի շնորհիւ Սուրմալուն շուտով կը խաղաղվի: Առ այժմ հանգիստ է, բայց թուրքերը զէնք են տեղափոխում:

Մի փոքր վտանգված է եզիդի քուրդերի դրութիւնը: Որովհետև հայ-թուրքական ընդհարումների ժամանակ նրանք հրաժարվել էին Թիւրքիայից եկած մուսուլման քրդերին օգնութիւն ցոյց տալու—այդ պատճառով տեղական մուսուլման քրդերը իրանց ցեղապետների դրդմամբ սկսել են նեղել ու ճնշել նրանց: Այդ միջոցներով մուսուլման քրդերը նպատակ են դրել ահաբեկել եզիդի քրդերին ու, համախմբել իրանց շուրջը զանազան մութ նպատակների համար, որոնք բացարձակ վնասակար են ոչ միայն տեղական երկրագործ, խաղաղ ազգաբնակութեան համար, այլև բարդութիւններ կը ստեղծեն կառավարութեան համար:

Սահմանի վրա գտնվող այդ գաւառում տեղի ունեցող խլրտումները, քրդական անկարգութիւնները չեն կարող արձագանք չը գտնել հարևան Թիւրքիայի իր ցեղակիցների մէջ և վնասակար հետևանքներ չը ստեղծել:

Ահա այդ հեռանկարը չը պէտք է մոռացութեան տայ նա, ով խաղաղութեան նախանձախնդիր է:

Դեռ անցեալ պատերազմների ժամանակ եզիդիներն էին, որոնք իրանց ցեղակից մուսուլման քրդերի դաւադրական քայլերի հակառակ, հայերի հետ միացած մեծ ծառայութիւն էին անում ռուսաց բանակին:

Նրանք մինչև այժմ էլ մնում են նոյն վստահելի ու խաղաղ տարրը, անվնաս ոչ միայն կառավարութեան համար, այլև տեղական երկրագործ ազգաբնակութեան: Իրանց թւական սակաւութեան ու խաղաղասէր բնաւորութեան շնորհիւ նրանք էլ նոյնքան են վնասվում ու տուժում ցեղակից մուսուլման քրդերից, որքան և հարևան նստակեաց ժողովուրդը: Թէ այդ և թէ կրօնական խտրութիւնը անջրպետ է ստեղծել նրանց մէջ: Նոյնպիսի զզուանքի ու հալածանքի է ենթարկված եզիդի քուրդը մուսուլման քրդի ու թուրքի կողմից, ինչպէս և քրիստոնեայ հայը ու բնականաբար նա կարեկցութեամբ է վերաբերվում, իր շրջապատող տարրերի մէջ, դէպի հայը, դէպի խաղաղ, հալալ կեանքը: Հէնց դա է պատճառը, որ եզիդիների այդ ձգտումները դուր չեն գալիս իր ցեղակից մուսուլման քրդերին, որոնք այժմ սկսել են խիստ կերպով նեղել ու ճնշել նրան:

Անշուշտ արդարութիւնից ու պարտականութիւնից դրդված գաւառապետ Իոնինը լուրջ ուշադրութիւն կը դարձնէ այդ երևոյթի վրա:

Դ.

Բաթում, 14 յունիսի. (պաշտօնական թղթակցից):

Լոյս 11-ի գիշերը բերդապահ թնդանօթաձիգ 2-րդ գնդում յուզմունք սկսվեց: Ներկայացրվեց պահանջ՝ հեռացնելու ֆէլդֆեբելին վատ վերաբերմունքի համար: Բողոքներ են ներկայացրել նաև ծանր ծառայութեան և ինտենդանտական բաւականութեան մի քանի իրեր չը ստանալու դէմ: Բացի վերոյիշեալներից՝ զինւորները մի քանի ուրիշ տեսակի բողոքներ են ներկայացրել: Պաշտօնական անձանց յորդորները արդիւնք չունեցան: Վրա հասաւ պլաստունների գունդը, գրաւեց զօրանոցները, և արգելք եղաւ գնդին զինվելու հրացաններով և թնդանօթներ գրաւել: Այն ժամանակ գունդը ցրվեց իր վրանները և հանգստացաւ բացառութեամբ մի քանիների, որոնք փախել են մի քանի կողմնակի մարդկանց հետ մօտակայ գնդերը: Վերջիններս լուրեր տարածեցին, թէ կօզակները գնդակահարում են երկրորդ գնդի թնդանօթաձիգ զինւորներին: Պրովոկացիան աջողութիւն չունեցաւ: Առաւօտեան ժամը 10-ին յուզմունքն անցաւ թնդանօթաձիգ վաշտերի 5-րդ և 6-րդ գնդերը, ինչպէս և գնդակաձիգ և ականի զօրքերի մէջ: Թնդանօթաձիգ վաշտի 5-րդ գունդը, որ կանգնած էր 6-րդի հետ, և մնացած գնդերը, հաւատարիմ մնացին իրանց ծառայութեան պարտականութեան: Ամբողջ գիշերը զօրքերը յուզմունք և անկարգութիւններ առաջացնող գնդերին պաշարված դրութեան մէջ պահեց: Առաւօտեան վաղ տեղական բերդապահ զօրքի մասերը զղջացին իրանց վարքը և սովորական պարապմունքներին կպան: Զինւորներից մի քանիսը հրացանները չը վերադարձրին, բայց զինված ընդհարման չը դիմեցին: Յուզմունքը մեղմանում է:

(Հեռ. Գործ.)

Բաթում, յունիսի 12-ին

Երէկ երեկոյեանից սկսած մեծ տագնապի մէջ է քաղաքը. րոպէ առ րոպէ սպասվում է, որ կարող է լուրջ ընդհարում տեղի ունենալ զօրքերի մէջ և ամեն ինչ ոչնչութեան մատնվել քաղաքում: Այդ բոլոր երկիւղի պատճառը այն է, որ երէկ զինւորների մեծ միտինգ էր տեղի ունեցել քաղաքից դուրս, որի ժամանակ խերսոնեան գնդի զինւորները և կօզակները ուղարկվել էին միտինգը ցրվելու: Միտինգին ներկայ գտնվող զինւորները, որ ինչպէս լսեցինք, մեծ մասամբ եղել էին մինի (ականային) բօտայից և տորպեդիստներից, իրանց տեղերը վերադառնալուն պէս սկսել էին անմիջապէս թնդանօթները դարձնել դէպի քաղաք և սպառնական դիրք բռնել դէպի իրանց մօտեցող կօզակները և խերսոնեան գնդի զինւորները, որոնք, որպէս թէ ուզեցել են շրջապատել և պաշարել նրանց: Նկատելով գործի լրջութիւնը, վերջիններին յետ էին քաշել իրանց մեծերը և ապա սկսել խաղաղ միջոցով բանակցութեան մէջ մտնել զինւորների հետ: Որպէս թէ դեռ հաշտութիւն չէ կայացել երկու կողմերի մէջ, որի պատճառով և սարսափ է տիրում ամբողջ քաղաքում: Շրջող լուրերը սրանք են, դեռ հաստատ տեղեկութիւն չը կայ իսկականի մասին:

Այսօր, առաւօտեան ժամը մօտ 10-ին, տեղիս ռուս-չինական բանկի ծառայողներից մէկը 25,000 րուբլի մի ուրիշ բանկ փոխադրելու ժամանակ, աւազակները յարձակվեցին վրան և խլեցին ձեռքից ամբողջ գումարն ու անվնաս կերպով անյայտացան:

Գ. Գրիգորեան

Գանձակ, 14 յունիսի

Թուրքական հրոսակախմբերը հանգստանալու տրամադրութիւն չեն ցոյց տալիս բնաւ. այժմս օր չէ անցնում առանց նրանց քաջագործութիւնների: Մի շաբաթ առաջ երեք-չորս օրով գոնէ հանգիստ էին առնում: Այդ հրոսակախմբերը այժմս որսորդական խմբեր են դարձել ուղղակի. Նրանց որսորդութեան առարկաներն են հայերը, անզէն, անպաշտպան հայերը, կօզակների ու էկզեկուցիաների արհաւիրքներին ենթակայ հայերը, զէնքի, նոյն իսկ դաշոյնի ու ատրճանակի համար ամիսներով ձերբակալվող հայերը: Եթէ հովանաւորութիւն չունենային թուրք աւազակախմբերը, այն ժամանակ թուրքերը հնարաւորութիւն չէին ունենայ հայի մազին անգամ դիպչել... Կառավարութիւնը, Ալիխանի ադմինիստրացիան, հայերի ձեռքն ու ոտքը կապել է բառիս բուն մտքով ու գցել նրանց թուրքերի տրամադրութեան տակ. Թուրքերի ձեռքով սպանված թուրքերի համար նոյն իսկ էկզեկուցիա է դնում հայոց գիւղերում. այժմս էկզեկուցիա է Բանանցում ու Զօվդարում: Ամսիս 11-ին թուրքերի մի խումբ յարձակվում է Բանանցի սարերում տեղացի մի երիտասարդի վրա, փորձելով սպանել նրան ու խլել զէնքը. քաջ երիտասարդը ամբողջ մի ժամ կռւում է չորս թուրքի դէմ ու փախուստ դարձնում նրանց: Յունիսի 12-ին թուրքերը Ոսկանապատ գիւղի անտառում սպանում են մի հայի ու վիրաւորում են երկուսին. սպանվածի զէնքը տանում են:

Կաղզուանից գրում են «К.»-ին, որ մօտ օրերս ռուս-թիւրքական սահմանագծի մօտիկ մի անտառում Կաղզուանի շրջանի Զինամիջի պահականատան ոստիկանական պահակների ու ռուսական հողի վրա անտառները կտրող 300 հոգուց բաղկացած թիւրքական քրդերի մէջ ուժեղ հրացանաձգութիւն է տեղի ունեցել, որը տևել է առաւօտեան ժամը 8-ից մինչև 12-ը, որից յետոյ քրդերը հարկադրված են եղել նահանջել: Պահականատան գլխաւորի ասելով, քրդերի կողմից սպանված է 1 մարդ, 4 եզ և մի քանի հոգի էլ վիրաւորված են, իսկ պահակների կողմից կորուստ չէ եղել:

ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

—Վերջին 2—3 օրերի ընթացքում Պետերբուրգում յամառ կերպով լուրեր տարածվեցին գորոդովոյների գործադուլի մասին: Վերջինները մեծ քանակութեամբ խնդիրք են տալիս իրանց արձակելու մասին, պատճառ բերելով ծանր ծառայութիւնը, որի շնորհիւ նրանք ազգաբնակութեան հետ ուղղակի թշնամական յարաբերութիւն են ստեղծում: Բայց որովհետև նրանց արձակելու խնդիրը չեն կատարում, այդ պատճառով նրանք էլ պատրաստվում են գործադուլ անելու: Ամուսնացածները և ընտանիքաւորները ուղարկում են իրանց հարազատներին հայրենիք, իսկ իրանք ամփոփում են իրանց միջոցները և փող են պահում գործադուլի դէպքում ապրելու համար: Պահանջները դեռ ևս ճիշտ կերպով չեն ձևակերպված, բայց գլխաւորապէս տնտեսական բնաւորութիւն են կրում. «XX Вѣкъ»

—Յունիսի 6-ին, երեկոյեան ժամը 7-ին, աշխատանքները վերջացնելուց յետոյ, բանւորները և բանւորուհիները, թւով 3000 հոգուց աւելի, հաւաքվեցին Սև գետակի մօտ և միտինգ բաց արին: Խօսեցին ս.-դ. և ս.-ր.-ները: Երբ խօսում էր ս. ր.-ը, միտինգը արդէն շրջապատված էր ձիաւոր գորոդովոյներով և կօզակներով: Ոստիկանական պաշտօնեան մի քանի անգամ առաջարկեց ժողովին ցրվել, բայց բանւորները չը ցրվեցին՝ մինչև որ վերջացրեց ճառախօսը: Այստեղից բանւորները առաջ շարժվեցին դէպի Նաւահանգստի մօտիկ դաշտը: Ամբողջ ժամանակը ուշադրութեամբ ճառախօսների ճառեր լսող գորոդովոյները խաղաղ կերպով քայլում էին ամբոխի ետևից: Իսկ երբ վերջինս դուրս եկաւ բաց դաշտը, նրանց դէմ դուրս եկան սրարշաւ կօզակները, իսկ ետևից սկսեցին նրանց սեղմել ձիաւոր գորոդովոյները: Ամբոխը այս ու այն կողմ փախաւ: Մի մասը բարձրացաւ Սամօյլենսկի գերեզմանատան ցանկապատի վրա ու փախաւ: Շատերը ընկան սլացող ձիաների սմբակների տակ, մնացածներին մտրակահար արին: Ամբոխի մէջ մի քանի անգամ գնդակ էլ են արձակել, բայց անհետևանք է անցել: «XX Вѣкъ»

ՍՈՒՐՄԱԼՈՒԻ ԴԷՊՔԵՐԸ

Իգդիր, յունիսի 8-ին

Վերջին օրերս Սուրմալուում տեղի ունեցած թուրք-հայկական ընդհարումների պատճառով մեր իգդիրցիները, որոնք օտար տեղերումն են գտնվում, չափազանց յուզված են և մինչև այժմ էլ հեռագիրներով և նամակներով հարցնում են եղելութիւնը: Որպէս զի միամտվեն հետաքրքրվողները, ճշտութեամբ արձանագրում ենք եղելութիւնները:

Ջրի հարցն է, որ դամոկլեան սրի նման տասնեակ տարիներից ի վեր կախված է սուրմալուեցիների գլխին, շնորհիւ կաշառակեր միրաբների (ջրբաժան) և Արաքսի ափում բնակվող անբարեխիղճ թուրք գիւղացի հարևանների: Գարնան և ամառվայ ամիսներում անտանելի չարչարանքներով ջուր են բերում և շատ անգամ, ջուր չը լինելուց, ցանքերը չորանում են և խեղճ գիւղացին ձեռք ծոցին վաշխառուին է դիմում ընտանիքը պահելու մի կերպ՝ հետևեալ տարվայ լաւ յոյսերով մխիթարված:

Ըստ սովորութեան, մայիսի 30-ին Իգդիր և շրջակայ մի քանի հայ գիւղերը գնում են Արաքս ջուր կապելու (շաբաթը երեք անգամ, համարեա 14—18 վերստ հեռաւորութեան վրա). Իգդիրցի բանւորին գաւառապետը վերադարձնում է գիւղ, պատճառաբանելով թէ՝ փոքրահասակ են. այդ իսկ օրը բլուրցիք լաւ զինված իրանց բանդում, (ջրբանդքում) աշխատանքները սկսած են լինում, հետևեալ օրը պէտք է գնային Իգդիրի, Ալիղամարի, Բհարլուի, Իգդիրմաւի, Բլուրի և Հալվէրիսի բանւորները, թւով մի քանի հազար, հաշուելով և Մուլաքլուի հայ-Դաշբուռունի և Ղարադոյնի բանւորները:

Նախօրօք հայ գիւղերի տանուտէրներին կանչում է գաւառապետը և գրաւոր խօսք է առնում, որ բոլորովին անզէն գնան, ապա թէ ոչ՝ ամենախիստ պատասխանատուութեան կենթարկվեն և որպէս ապահովութիւն՝ յանձնում է չորս ստրաժնիկի՝ բանւորներին տեղ հասցնելու. իսկ ինքը, գաւառապետը, գաւառի հայ և թուրք խաղաղարար յանձնաժողովի անդամների ուղեկցութեամբ, ուրիշ ճանապարհով է գնում. ամբողջ ճանապարհը թուրք գիւղերովն է անցնում: Բոլոր բանւորներից վաղ գնացած են լինում անզէն բլուրցիք, որոնք հասնելով Հախմամատ թուրք գիւղի արտերին, յանկարծ յարձակման են ենթարկվում թուրքերի կողմից. մէկի գլուխը կտրում են իսկոյն, միւսը ծանր վիրաւորվում է, իսկ մի քանիսները յետ են փախչում և ընկերներին յայտնում, որոնք շտապ վրա հասնելով՝ փախցնում են թուրքերին, ծանր վիրաւորված թողնելով բլուրցուն: Այդ իսկ միջոցին միւս ճանապարհով յետ են դառնում Ալիղամարի բանւորները, համոզում են իգդիրցիներին, որ վտանգ կայ, անզէն գնալը անմտութիւն է, իսկ իգդիրցիք գաւառապետի տուած խօսքին հաւատալով՝ գնում են, մանաւանդ որ գիւղերում մի կաթիլ ջուր չը կայ: Տեղ հասնելով, հէնց այն է սկսում են գործը, երբ դարանակալ թուրքերի հրացանների որոտը լսվում է. բահերով ոչինչ չէր կարելի անել մօսինի և բերդանի դէմ: Այդ շփոթութեանը րոպէում խաղաղարար կոմիսիայի անդամ Մ. Կանաքանցը, արդար զայրոյթով լցված՝ ստիպում է բանւորներին անցնել միւս ափը. շարունակելով ճանապարհը գիշերում են Մարգարա, Ալիջան հայ գիւղերում: Հետևեալ օրը աւելի կարճ ճանապարհով ցանկանալով վերադառնալ գիւղը, Հիւսէյին գիւղից դիմաւորում են նրանց զինված Մամադ բէկ հրէշը, Բօգուսլավսկու ճէտը, իւրայիններով, գնդակների տարափի տակ խեղճ բանւորները զանազան ուղղութեամբ փախչում են, մինչև Իգդիրից զօրք գնաց և ապահով բերեց նրանց գիւղ:

Թուրք բանւորները, հանդիպելով մի խումբ կտրիճ հայ երիտասարդների, լաւ ջարդ են ուտում, զօրքը օգնութեան է հասնում, տեսնում է Ջաքըլու գիւղի հայ տները թալանի մատնված, մի մասը Մալաքլու են փախած, միւս մասը տեղիս ոստիկանատանը փակված, իսկ գիւղացիք ապաստանած Փանիկ գիւղում:

Ամսիս 2-ին դարձեալ իրարանցում ընկաւ, որ Ալիղամար գիւղին են վրա տուել: Անմիջապէս օգնութեան են հասնում կօզակները, յարձակվողները լինում են Եաշի, Օբաի և գրոից եկած մի քանի թուրքեր և քիւրդեր, որոնց մէջ է լինում Համիդ բէկի ադան, շրջապատում են դրանց, և բերում բանտարկում 13 թուրքերի հետ, որոնցից մի քանիսը վիրաւորված: Սպանված են 14—18, անշուշտ վիրաւորված մէկ հայ, ուրեմն երկու օրվայ ընթացքում 20—25 թուրք սպանված և վիրաւոր Բիւրի ու Համամսի կուսում, մէկ սպանված երեք ծանր վիրաւոր հայ. ամսիս 6-ին Թէքիլուի տաւարածների վրա յարձակվում են՝ մէկին թեթև վիրաւորում։ Երեկ եկաւ Երևանից գնդ. Նահանգապետ Եազկեվիչ, այսօր շրջում է գիւղերը. Բիւր գիւղին, որը դեռ երեկ 2000 ր. տուգանք տուեց, այսօր էլ մի րոտա զինուոր ուղարկեց գիւղը. միւս գիւղերը դեռ ևս յայտնի չեն. Զաքրլուի վնասը հաշտարար դատաւորը գնահատել է 1800 ր., որը պէտք է վճարեն Մալաքլուի Թուրքերը։ Այս ընդհարումների առթիւ բանտարկված են չորս բոլորովին անմեղ հայեր Զաքրլուից. ահա ամբողջ ճշգրիտ իրողութիւնը։

Տ. Ս. Զաքարեանց

ՄԱՄՈՒԼ

Հայ-Թուրքական ընդհարումների խնդիրը նորից առաջնակարգ տեղ է գրաւում մեր առօրեայ կեանքի մէջ։ Մի կողմից պրովօկացիան, միւս կողմից սուր և վայրենի բնազդները նորից կամենում են դարձնել մեր թըշուառ, տանջված երկիրը արիւնահեղ տեսարանների թատերաբեմ։ Տեղական «Кавказъ» լրագիրը անցեալ օրվայ իր առաջնորդող յօդուածը (№ 136) նուիրելով այդ հարցին ասում է.

«Ոչ լրագրական յօդուածները, որոնք կոչ էին անում դէպի համերաշխութիւն և բարեկամութիւն, ոչ խաղաղարար մասնաժողովների աշխատութիւնները չը կարողացան, ուրեմն, ազդել ամբոխի տրամադրութեան վրա և հաստատել ցանկալի խաղաղութիւնը և անդորրութիւնը։ Մարդու գլուխը դադարում է կանոնաւոր մտածել, սիրտը ցաւով ճմլվում է, երբ հասնում են մեզ անմեղ և թշուառ գիւղացիների ողբը և հառաչանքները։ Արդեօք վերջ է լինելու այդ արիւնահեղ եղերերգութեան։ Սթափվում են հայերը և Թուրքերը. խոստովանում են, վերջապէս, ինքնաոչնչացման ամբողջ անմտութիւնը, իրանց ամբողջ յանցաւորութիւնը հայրենիքի, պետութեան, մարդկութեան առաջ։ Ահա հարցեր, որոնք դուրս են թռչում մեր ամենքի բերանից։ Դրանց իբրև պատասխան մամուլը հեղինակաւոր կերպով պատասխանում է, որ ամեն բանի մէջ յանցաւոր է կառավարութեան պրովօկացիան, որ վերջ չի լինի, որքան գոյութիւն ունի այդ չարիքը։ Եւ հասարակութիւնը իր մեծամասնութեամբ հաւատում է մամուլի այդ յայտարարութեան։ Մամուլը հաստատում է այն փաստը, որ հայերը և Թուրքերը յոգնել են, ույժից ընկել են, որ անընդհատ կռիւը և զինւորված խաղաղութիւնը, որ միայն ժամանակ առ ժամանակ է հաստատվում, ամբողջովին ուժեղել են նրանց։ Հասարակութիւնը կրկնում է մի և նոյնը, զարմանալով իշխանութեան անգործութեան վրա։ Եթէ անսանք այն ամենին, ինչ խօսվում է, մնում է միայն գալ այն եզրակացութեան, որ երկու եղբայրական և բարեկամական ազգերը պատրաստ են մոռանալ իրանց անձնական հաշիւները, պատրաստ են գրկման արտասուքներով միմեանց ձեռք կարկառել, բայց որ կառավարութիւնը, օգտվելով իր անփոփոխ գործիքով—պրովօկացիայով, արգելում է նրանց, փակելով մերձեցման բոլոր ճանապարհները։ Բայց արդեօք իրողապէս այդպէ՞ս է։ Արդեօք, մենք չենք գործում ճշմարտութեան և արդարութեան տարրական պահանջների դէմ։ Կարծում ենք—այո։ Թէ ոստիկանութեան և թէ վարչութեան ստորին պաշտօնեաների մէջ կան շատ անձինք, որոնք իրանց ծառայողական գործունէութեան մէջ ղեկավարվում են անձնական համակրութիւններով և հակակրութիւններով, դրա մէջ հազիւ թէ կասկած լինի։ Թէ նրանցից շատերը, քաղաքացիական պարտականութեան զգացմունքի անզարգացութեան պատճառով, հեշտութեամբ անձնատուր են լինում տարերային շօվինիստական շարժումներին և դրանով բորբոքում են կրքերը հայերի և Թուրքերի մէջ, դրա մէջ ևս կասկած չը կայ։ Բայց ինչո՞ւ դրա հետ միասին մենք միշտ փակում ենք մեր աչքերը մեր իրականութեան ուրիշ երևոյթների վրա, որոնք ոչ պակաս նպաստում են հրդեհի զարգացման։ Ինչո՞ւ մենք կրիտիկաբար չենք վերաբերվում միմեանց։ Մի՞թէ հայերի և Թուրքերի մէջ ևս պրովօկատորներ չը կան։ Դժբախտաբար, նրանք կան և նրանց թիւը շատ է, և ամեն յարմար դէպքում նրանք պատրաստ են սերմանել լայն բուռներով երկպառակութեան և թշնամութեան սերմեր։ Մղելով անընդհատ կռիւ առանձին չինօվնիկների պրովօկացիայի դէմ, համրացնելով նրանց գործունէութիւնը մինչև կառավարական պրովօկացիայի հասկացողութեան, հասարակութիւնը մոռանում է եռանդուն պրովօկատորների գոյութիւնը իր սեփական շրջանի մէջ։ Եւ սակայն այդ մարդիկ, ոչ մի բեակի չենթարկվելով և պատսպարվելով շարունակ ժողովրդի մէջ, աջողութեամբ իրագործում են իրանց ամօթալի միսսիան։ Մի՞թէ եղբայրական թշնամութեան բռընկումները Երևանում, Իգդիրում և Կարսում, պրովօկացիայի արդիւնք չէին։ Ի հարկէ—այո։ Բայց ո՞ր պրովօկացիայի։ Ահա մի հարց, որի մասին արժէ մտածել, նախքան յանցանքը կառավարութեան վրա ձգելը, ինչպէս այդ անում են լրագիրներից շատերը։ Յիշեալ տեղերում, իբրև մօտ Թիւրքաց սահմաններին, վխտում են Թիւրքական էմիսարների լէգիօններ։ Նրանք, տեղական պրովօկատորների աջակցութեամբ, ամեն կերպով աշխատում են էլեքտրականացնել մթնոլորտը։ Մինչև որ լաւագոյն հասարակական ույժերը, թէ Թուրք և թէ հայ, չեն համախմբվի անկեղծ նպատակով, երևան հանելու բակական պրովօկատորներին, չը բաւականալով շաբլօնային կերպով ցոյց տալու ռուսաց իշխանութեան թելադրութիւնը, սպառնացող աղէտների ուրուականը պէտք է տարածված լինի մեր վրա։ Առանց կենդանի եռանդուն գործունէութեան ամեն մի քարոզ կը մնայ դատարկ հնչիւն»։

Մեր կարծիքը այս յօդուածի մասին եկող անգամ կը յայտնենք։

*

Նախորդ օրվայ համարում մեր ընթերցողներին ներկայացրինք այն ապշեցուցիչ խօսակցութիւնը, որ ունեցել էր Գօրեմիկինի մինիստրութեան անդամներից մէկը «Times»-ի թղթակցի հետ։ Այդ խօսակցութեան արձագանքը, ինչպէս յայտնի է, մուտք գործեց Պետական Դումայի նիստում, ուր աշխատաւոր խմբակի յայտնի պատգամաւորներից մէկը՝ Ալադին, «սև հարիւրակի» պատկանող, խուլիգան անունը դրոշմեց վերոյիշեալ ցինիկ մինիստրին, մինիստր, որ կախաղաններից երկրում անտառներ անկող Վիտտէին անգամ մեղադրում էր յեղափոխականութեան մէջ։

Հետաքրքրութիւնից զուրկ չէ, ի հարկէ, առաջ բերել «Times»-ի նոյն թղթակցի դատողութիւնները այդ խօսակցութեան առթիւ։ Ահա թէ ինչ է ասում անգլիական նշանաւոր պահպանողական լրագրի թղթակիցը.

«...Բիւրօկրատիայի օրգանը ասում է, որ Դուման կատարելապէս ենթարկված է յեղափոխականների ազդեցութեան։ Այս յայտարարութիւնը հետաքրքիր է, որովհետև նա համապատասխանում է այն շշուկներին, որ ման են գալիս բիւրօկրատական բարձր շրջաններում, և անկասկած, այդ միտքը շահագործել են, մաքառելու համար ամեն վարանման դէմ Պետերհօֆում։

«Պէտք է նկատել, որ դրութիւնը նոյնը չէ, ինչ որ էր կոմս Վիտտէի հրաժարականից առաջ։ Սա գնաց և նրա տեղ դրվեց մի ուրիշ բիւրօկրատ, մինչդեռ Գօրեմիկինի մինիստրութեան տեղ կարելի էր միայն դնել մի պարլամենտական կառավարութիւն, այսինքն, որ պէտք է թողնվեն ինքնակալութեան հովանու տակ իրագործելի քաղաքական առաջադիմութիւնների մասին պանսլաւական այդ բոլոր գաղափարները, գաղափարներ, որոնց կառչում են միշտ յամառութեամբ արքունիքի բարձր շրջաններում։

«Եթէ ճիշտ է, որ հրաժարվել են պարլամենտական մի մինիստրութիւն ստեղծելու դիտաւորութիւնից, պարզ է, որ Պետերհօֆում ամեն տատանման դէմ կռուելու համար պէտք պիտի լինի յեղափոխական մի նոր շարժման, կամ զօրքի շարքերում դըժգոհութեան նոր արտայայտութիւններ, որպէսզի կառավարութիւնը որոշէ ընդունել անխուսափելին, ինչ որ յամենայն դէպս պէտք է ընդունէ սրանից մի քանի ամիս յետոյ, երբ պետական մեքենը դատարկվի և մի նոր փոխառութեան կարիքը սուրզողական դառնայ։ Այդ պայմանները, գոյութիւն ունին արդէն մասամբ։ Միխայլիչենկօ պատգամաւորը այսօր ստացել է մի հեռագիր, որ Պօլտավայի գարնիզօնի ապստամբութիւնն է յայտնում։ Հեռագիրն ասում է, որ զինուորները ժողով գումարեցին զինված և պահանջեցին, բացի մի քանի տնտեսական րէֆօրմներից, ազատել իրանց ոստիկանութեան պաշտօնը կատարելու պարտաւորութիւնից։ Իշխանութիւնները ուղարկեցին հեծեալ ոստիկանութիւն՝ զօրքերին ցրվելու համար, բայց զօրքերը նրանց վրա կրակ բացին։ Ոստիկանութիւնից շատ մարդիկ վիրաւորված են։ Ուրիշ մանրամասնութիւններ չը կան։ Պօլտավայի զօրքերի դժգոհութիւնը, հետևում է Կուրսկի զօրքերի դժգոհութեան, և կասկած չէ թողնում զօրքերի տրամադրութեան մասին։ Պետերբուրգում կացութիւնը աւելի ապահով չէ։ Ես տեսայ Թէնկնայան հեծելազօրքի 30 զինուորների, որոնց տանում էին բանտ. և ասում են թէ բերդը լիքն է կասկածելի զինուորականներով։ Բերդի շուրջը պահապանների թիւը եռապատկել են, և արագաձիգ թնդանօթներ են դրել, նրա ամբողջ շրջակայքը պաշտպանելու համար։

Հետզհետէ աճում են և ագրարական անկարգութիւնները...»

Այնուհետև, որքան նորութիւններ այդ ուղղութեամբ։ Յիշենք, ի միջի այլոց Սևաստոպօլի զօրքերի ապստամբութիւնը, որը խնամքով թաքցնում է բարեխնամ կառավարութիւնը, հրամայելով հեռագրական գործակալութիւններին ազգասիրաբար լռել...

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՑ

Երեկ, հինգշաբթի, յունիսի 15-ին, Թիֆլիսում, բացվեց հայ ուսուցչական ժողովը Յովնանեան դպրոցի շէնութեան մէջ։

Նիստը բացեց առաւօտեան ժամի 10-ին Ա. քահանայ Բագրատունին, որը զեկուցեց առաջիկայ ժողովի նպատակների և պարապմունքների մասին։

Ժողովի համար եղած նախապատրաստական գործունէութեան և յանձնաժողովների մշակած ծրագիրների մասին զեկուցեց պ. Աւագեան իբրև քարտուղար նախկին բիւրօյի։

Այնուհետև ժողովը զբաղվեց նախագահի ընտրութեան հարցով։

Որոշվեց ընտրել մի նախագահ և երկու օգնական գաղտնի քուէարկութեամբ։

Ժամանակաւոր նախագահ ընտրվեց Յ. Տէր-Միրաքեան։

Ա. Քալանթար «Մշակ»-ի խմբագրութեան կողմից շնորհաւորեց ժողովի բացումը։

Ժողովի առաջին նիստը կը լանվեց ժողովի կազմի և նախագահի ընտրութեան հարցով։

Մանրամասնութիւնները միւս անգամ։

Երկրորդ ժողովը տեղի կունենայ այսօր, ուրբաթ, առաւօտեան ժամի 9-ին։

ԺԱՆՏԱԽՏԻ ԴԷՄ ՄԱՔԱՌՈՒՄ

Երէկ, յունիսի 15-ին, Թիֆլիսում բացվեց մի յատուկ խորհրդակցութիւն, որ պէտք է քննէ անասունների ժանտախտի դէմ կռուելու հարցի վիճակը Անդրկովկասում։

Խորհրդակցութեան մասնակցում են անասնաբոյժներ և գիւղատնտեսներ։ Նախագահ է անասնաբուժական վարչութեան գլխաւոր Վ. Նագօրսկին, որ եկել է Պետերբուրգից պարզելու հակաժանտախտային մաքառման գործը Կովկասում։ Նա նախօրօք շրջել էր մեր երկրի մի քանի տեղերը, ուսումնասիրել տեղական պայմանները և պատրաստել մի զեկուցում։

Խորհրդակցութիւնը սկսվեց զեկուցման ընթերցանութեամբ։ Զեկուցման մէջ առաջ են բերված մի շարք խորհրդակցութիւններ այն բարեփոխութիւնների մասին, որ պէտք է մտցնել գործի աջողութեան համար։

Ա. Քալանթար, ողջունելով խորհրդակցութիւնը, առաջարկեց հրաւիրել մի համագումար ժողով, որին մասնակցէին անասնաբոյժներ, գիւղատնտեսներ և ուրիշ անձեր փոխադարձ օգնութեամբ մշակելու միջոցներ մաքառելու ժանտախտի դէմ և բարւոքելու անասնաբուժական գործի դրութիւնը մեր երկրում։ Այդպիսի մի ժողով կարելի էր հրաւիրել ձմեռը։

Այդ առաջարկը հաւանութիւն գտաւ ժողովականների կողմից։ Համագումար հրաւիրելու միտքը պաշտպանեցին Նագօրսկին, Վարդանեան, Տարասենկօվ և ուրիշները։

Խորհրդակցութիւնը կունենայ մի քանի նիստեր։

Նա տեղի ունի կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան դահլիճում ցերեկվայ ժամի 11-ից մինչև 3-ը։

ԱՆՎԵՐՋ ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐ

Բիւրօկրատիայի տատանումները անվերջ են։ Մէկ տեսնում ես, լուր է տարածվում, թէ մինիստրութիւնը պատրաստվում է հրաժարական տալ, բայց չէ անցնում մի-երկու օր, և լուրը փոխվում է. ոչ միայն մինիստրութիւնը չէ ուզում հրաժարվել, այլ ընդհակառակը նա պատրաստվում է Պետական Դուման ցրվել։ Սակայն անցնում են օրեր, շաբաթներ, բայց մինիստրութիւնը ոչ հրաժարական է տալիս և ոչ էլ Պետական Դուման է ցրվում։

Ի՞նչ են նշանակում այս միշտ կրկնվող հակասական լուրերը, որոնցից և ոչ մէկը չէ իրականանում։ Միթէ դրանք չար մարդոց ու յետին մտքերով հնարած լուրեր են։ Մենք այդ չենք ենթադրում, որովհետև, որչափ հետևել ենք, այդ լուրերը դուրս են գալիս ամենահաստատ աղբիւրներից։ Իսկ եթէ նրանք չեն իրագործվում, դա պարզապէս նրանից է, որ բիւրօկրատիան սաստիկ տատանվում է, նա վերջին ծայր անճռողական է դառել և ինքն էլ չէ հասկանում, թէ ինչ պէտք է անել։

Մինիստրութիւնը հրաժարվելու մասին, ի հարկէ, երբեք չէր էլ մտածի, նա ամենայն սիրով կարձակէր ու կը ցրվէր այդ ատելի Դուման, որը մի ահագին փորձանք դառաւ բիւրօկրատիայի գլխին ու նրա ամբողջ հանգստութիւնը խանգարեց։ Սակայն, բարկութեան րոպէին, երբ նա այդ որոշումն է տալիս և լուրը արագութեամբ տարածվում է, նա սկսում է աւելի լրջանալ ու աւելի սառնասրտութեամբ նայել իրերի դրութեան վրա։ «Շատ լաւ,—մտածում է բիւրօկրատիան,—Դուման կը ցրվենք, իսկ յետո՞. յետոյ ինչ անելու ենք»։

Եւ իսկապէս, ինչ անելու է յետոյ։ Չէ՞ որ Դուման ցրվելը երկրին բացարձակ պատերազմ յայտարարել է նշանակում։ Դուման ցրվել, այդ կը նշանակէ մի անգամից խորտակել տասնեակ միլիօնաւոր ժողովուրդների ամենայն փայփայած բոլոր յոյսերը։ Դուման ցրվել, այդ կը նշանակէ միլիօնաւոր քաղցածներին մի կտոր հացի, իսկ գերութեան մէջ տառապողներին ազատութեան յոյսից զրկել։ Ճիշտ է, այս մօտ երկու ամսվայ ընթացքում, Դուման դեռ ևս ոչ մի դրական քայլ չէ արել, դեռ ևս նա ոչ ոքի ոչինչ չէ կարողացել տալ, բայց և այնպէս ժողովուրդը դեռ չէ կորցրել նրա վրա ունեցած յոյսը, ընդհակառակը, գնալով այդ յոյսերը աւելի ու աւելի մեծանում են, որովհետև ժողովուրդը տեսնում և համոզվում է, թէ Պետ. Դուման շատ ու շատ լաւ բաներ է տրամադիր անելու ժողովրդի համար, բայց ամեն քայլափոխում կառավարութիւնը նրան արգելք է հանդիսանում։

Ժողովրդի այսպիսի ընդհանուր տրամադրութեան մէջ ինչպէս ցրվել Դուման։

Գօրեմիկին և Ստոլիպին շատ աշխատեցին ժողովրդի այդ տրամադրութիւնը դէպի իրանց կողմը գրաւել։ Նրանք, ինչպէս գիտենք, իրանց հաշւաւոր յայտագիրը տասնեակ հազարներով ցրվեցին ժողովրդի մէջ, դրանից յետոյ էլ նահանգապետներին յատուկ հրահանգներ ուղարկեցին, որ նրանք, Պետական Դումայի պահանջները աղաւաղելով, յատուկ յայտարարութիւններ տպագրեն ու ժողովրդի մէջ ցրվեն, որպէսզի այդ եղանակով կարողանան Դուման վարկաբեկել. բայց ոչինչ չօգնեց. ընդհակառակը, ադմինիստրացիայի բոլոր աշխատութիւնները ճիշտ հակառակ ազդեցութիւն ունեցան և ժողովուրդը աւելի ու աւելի ամուր կապերով կապվեց Դումային։ Ժողովրդի այդ տրամադրութիւնն ու համակրութիւնը հետզհետէ աւելի ընդարձակ խաւերի վրա է տարածվում և նա անցնում է մինչև իսկ զօրքի մէջ։

Այս բոլորը, ի հարկէ, շատ լաւ տեսնում է և բիւրօկրատիան, և հէնց այդ պատճառով էլ, երբ նա բարկացած րոպէին Դուման ցրվելու որոշումն է տալիս, մի քանի րոպէից յետոյ նրա ձեռքերը թուլանում են, երբ սկսում է լրջութեամբ դրա հետևանքների մասին մտածել։ Եւ իսկապէս, Դուման ցրվելուց յետոյ, կառավարութիւնը, ուզէ չուզէ, պէտք է զինւորական դիկտատուրա նշանակէ։ Բայց ներկայ հանգամանքներում ու ներկայ պայմաններում, երբ կառավարութեան դէմ են ոչ թէ մի քանի խմբակներ կամ նոյնիսկ յեղափոխական կուսակցութիւնները, այլ ամբողջ ժողովուրդը, նրա բոլոր խաւերը, նոյնիսկ զօրքի մի մասը, ինչ կարող է անել դիկտատուրան։

Զինւորական դիկտատուրա նշանակել, այդ կը նշանակէ՝ կառավարութեան պարզապէս փողոց դուրս գալ իր բանակով թշնամու դէմ կռուելու. բայց ինչպէս փողոց դուրս գալ, երբ կառավարութիւնը այլևս համարեա թէ բանակ չունի։ Այս բանն էլ, ի հարկէ, շատ լաւ է հասկանում բիւրօկրատիան, նա էլ, երևի, գիտէ, որ դիկտատուրան ամեն տեղ և ամեն ժամանակ միևնոյն արդիւնքը չէ կարող ունենալ և անաջողութեան մատնված դիկտատուրան ամենամեծ ու կործանաբեր պարտութիւնն է կառավարութեան համար։

Եւ այս բոլորը, իր համար տխուր, հետևանքների մասին լաւ մտածելուց յետոյ է, որ կառավարութիւնը շտապում է հերքել Դուման ցրվելու դիտաւորութեան մասին տարածված լուրը։

Այստեղ ահա սկսվում է խնդրի միւս կողմը. «ապա ինչ անել, ինչպէս դուրս գալ այս կախարդական աշխարհից», մտածում է բիւրօկրատիան և իր յուսահատ րոպէին, որոշում է, որ մինիստրութիւնը պէտք է հրաժարական տայ։ Սակայն այլ բան է որոշելը և այլ բան է որոշածը կատարել։

Շատ հեշտ է ասել՝ մինիստրութիւնը պէտք է հրաժարական տայ։ Բայց չէ՞ որ այդ պարզապէս նշանակում է, որ ամբողջ բիւրօկրատիան ինքնայօժար կերպով իր պարանոցը դէմ պիտի անի մազործի դանակին։ Այլ կերպ չէ էլ կարող լինել ներկայ Պետ. Դումայի կազմի օրով։ Նոր մինիստրութիւնը պէտք է անպատճառ կազմվի այնպիսի անձնաւորութիւններից, որոնք Դումայում մեծամասնութիւն կունենան, իսկ բիւրօկրատիան ներկայումս Դումայում մեծամասնութիւն չունի և չէ էլ կարող ունենալ։

Եղած մեծամասնութիւնը հէնց առաջին օրից պատերազմ յայտարարեց բիւրօկրատիային, ցանկութիւն յայտնելով, ամբողջ ադմինիստրացիային, ամենաբարձրից մինչև ամենացածրը, բոլորովին զրկել իրանց պաշտօններից և դատաստանական պատասխանատուութեան ենթարկել նրանց երկրին հասցրած բոլոր չարիքների համար։

Էհ, իրերի այսպիսի կացութեան մէջ, ինչպէս աւելի տալ, ինչպէս հրաժարվել։ Եթէ բիւրօկրատիան Պետ. Դումայում մեծամասնութիւն ունենար, այն ժամանակ խնդիրը շատ կը հեշտանար. ներկայ մինիստրութիւնը կը հրաժարվէր, նրան կը փոխարինէին նոյն բանակին պատկանող այլ մարդիկ, որոնք Դումայի հետ համերաշխութեան գալով, գործերը առաջ կը տանէին։ Բայց այդպիսի բան չը կայ. բիւրօկրատիան կողմնակիցներ չունի։ Եւ հէնց այդ է պատճառը, որ նա, ամեն անգամ, մինիստրական հրաժարականը որոշելուց յետոյ, յանկարծ սոսկում, սարսափում է և այդ սարսափի կատաղութիւնից հակառակ որոշումն է տալիս. պէտք է ցրվել Դուման։ Իսկ այս որոշումն էլ, ինչպէս վերևում տեսանք, նրա առաջ մի ուրիշ անդունդ է բացում։

Եւ այդպէս մնում է բիւրօկրատիան երկու կրակի մէջ խորովվելով ու իր հետ խորովում է և ամբողջ երկիրը։ Հազիւ թէ բիւրօկրատիան իր ինքնիրաւունքով կարողանայ իր այդ անվերջ տատանումներից դուրս գալ. նա այդպէս էլ կը մնայ երկու կրակի մէջ, մինչև որ յեղափոխութեան ուժգին յորձանքը չը գայ ու նրան դուրս չը նետէ իր այդ անելանելի դրութիւնից։

Խ.—Ազատ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՑԱՒԵՐԻՑ

II

«Մշակի» № 121-ի մէջ հրատարակված Ջիգրաշէնի ծխական դպրոցի ուսուցչական կազմի հրաժարականը, չը նայելով՝ անհետևանք չը մնաց և առանձին համակրանքով ընդունվեց քաղաքիս զանազան ուսուցչական խմբերի կողմից, և նոյն իսկ Թանդոյեան դըպրոցի մանկավարժական մարմինը միանալով Ջիգրաշէնցիների ձայնին հրապարակով բողոք արտայայտեց հարստահարված ուսուցիչների նիւթականը անպայման բարեփոխելու վերաբերմամբ, խոստանալով, որ ինքը պատրաստ է գործնականապէս աջակցել այդ խնդրի բարւոք լուծման, բայց և այնպէս, որքան տեղեկացանք Ջիգրաշէնցիների յարուցած գործի ընթացքից՝ կան մարդիկ, որոնք անուշադիր թողնելով նրանց պահանջները՝ խընդրամատոյց են եկել դասեր ստանձնելու այդ դպրոցում։

Մեզ թւում է թէ՝ ցանկացողների այդ վարմունքը, որքան դաւաճան և դասակարգային շահերը ոտնատակ տւող մի քայլ է, այնքան առաջացել է իրերի դրութեան հետ ծանօթութիւն չունենալուց։

Նոյն դպրոցի հոգաբարձութեան հրաւէրը («Մշակ» № 120) իր կատարեալ անորոշութեան պատճառով շատերին է մոլորութեան ենթարկել։ Բայց երբ կը հասնի պայմանաւորվելու ժամը, բոլոր խնդրամատոյցները հիասթափված յետ կը վերցնեն իրանց խնդիրները, երբ կիմանան դպրոցի դասագինը 15 րուբլի է սահմանած։

Ինչպէս մենք, այնպէս էլ մեզ հետ շատերը ուզում էինք մեղադրել հին խմբին, թէ նա ինչու է 15 րուբլի դասագնով դպրոց մտել, բայց երբ մօտիկ տեղեկացանք, բանից դուրս եկաւ, որ հին խումբը դարձեալ անորոշութեան և հոգաբարձութեան տուած վառ յոյսերի զոհ է դարձել։

Տարվայ սկզբից, հոգաբարձութիւնը իր բոլոր ուսուցիչներին հաւատացրել է թէ դասագինը որոշած է 30 ր. և թէև այժմ 15 րուբլիով են վարձում, բայց յունվարից յետոյ ոչ միայն 30-ական րուբլու հաշւով կը վարձատրվեն, այլ պակաս ստացած ամսականներն ևս կը լրացվեն։ Բայց այդ յոյսերը՝ լոկ ցանկութիւններ մնացին, իսկ իրականութեան մէջ նրանց ուսուցչական խումբը տուժեց նիւթականապէս և բարոյապէս։ Մի՞թէ բարոյական հարուած չէր հոգաբարձութեան վարմունքը, երբ նա հրաժարականը ստանալուն պէս՝ փոխանակ խորհրդակցելու, յանկարծ ի դիմաց այդ պահանջների բարեփոխութեան, ծաղրական մօտով հրաւէր է կարդում նոր խումբ կազմակերպելու։

Հայ ուսուցչական միութեան բիւրօյի կողմից բացվող ուսուցիչների համագումարին՝ զանազան լուրջ խնդիրների հետ անշուշտ ասպարէզ է գնվելու նոր դասագների չափը, որտեղի վճիռը պէտք է գործնական կատարելութեան հասցնել ամեն տեղ։ Եւ յուսով ենք, որ ինչպէս Ջիգրաշէնցիների, այնպէս էլ նրանց նման հարստահարված շատ ուսուցիչների կարիքները որոշ չափով կը բարեփոխվին և նրանք յարմարութիւն կունենան հանգիստ սրտով նուիրվելու դպրոցական վեհ զբաղմունքներին։

Ուսուցիչ՝ Զ. Բ.

ՇԱՐՈՒՆԱԿԵՆՔ

Բագուի գուժկան դէպքից յետոյ, երկու դժբաղդ ժողովուրդները ցաւալի ապշութեամբ նայեցին միմեանց երես, նայեցին իրանց անլուր աղէտքի վրա և անէծքի ու ցասումի միաձայն աղաղակով գոռացին.

—Կորչի՛ չէյթանը։

Եղբայրասպան կռւի առաջին շրջանն էր դա, գիտակցութեան րոպէն։

Բայց աղաղակը անհանգստացրեց չէյթանին, նա վատ դրութեան մէջ զգաց իրան։ Դժոխային դաւը առաջ մղելով հանդերձ, նա ամեն ճիգ գործ դրաւ մթագնելու երկու մարտիրոս ժողովուրդների գիտակցութիւնը։

Հասաւ նպատակին։ Ձեռները սկսեցին մեղադրել ու նզովել միմեանց։ Մտել էինք եղբայրասպան կռւի երկրորդ շրջանը։

Դաւը դարձեալ առաջ է մղվում այսօր նոյն անփաստ յամառութեամբ։ Բայց ճշմարտութեան լոյսը նուաճել է արդէն կոյրերին անգամ։ Մարդ չէք գտնի, որ չը դատապարտէ դաւաճան ձեռքը։

Մենք «Իրշադ»-ից բերել ենք այդ դատապարտութեան մի քանի ճիչերը։

Ահա մի նոր աղաղակ ևս.

«Այս օրերս մեր շուրջից եկող լուրերը ուրիշ բնաւորութիւն, ուրիշ գոյն են կրում։ Շուրջից եկող սև, նենգամիտ ամպերը հօրիզոնը բռնելով ճշմարտութեան արեգակի վարագուրման պատճառ են դառնում։ Մեր գեղեցիկ հայրենիքը սև օրերի մէջ ընկղմող, հայրերին՝ առանց որդու, մայրերին՝ առանց զաւակի, եղբայրներին՝ առանց քրոջ, քոյրերին՝ առանց եղբօր, կանանց՝ այրի, դժբաղդ ընտանիքներին անապաւէն, չէն վայրերը ամայի դարձնող, գեղեցիկ, դրախտ դաշտերը աւերակի փոխող նենգաւորները մեր շուրջը պատահող դաւադրական դէպքերից օգտվելով, ուզում են նոր լաւծ, հանգստացած մեր հայրենիքը նորից մեծ վտանգի ենթարկել։

Արիւնը խմելը սովորութիւն դարձրած «չէյթանի» այդ ծառայողները, երևի, թափված այդքան անմեղ արիւններից բաւական չեն. աւերակները սիրող այդ բուերը, երևի, ուզում են մեր շէն հայրենիքը հողի հետ հաւասարեցնել։

Նենգամիտների այդ նենգութիւնների մի փոքրիկ նուէրն է Երևանի ցաւալի դէպքը։ Բայց ամեն խելահաս, ուշիմ մարդ՝ այդ դէպքի մի դաւադրութիւն լինելը լրագրների տուած տեղեկութիւններից բացայայտ տեսաւ։ Թէպէտև այս մասին մեզ մանրամասն լուր չեկաւ, բայց Բագուի և Թիֆլիսի լրագիրների ստացած բոլոր լուրերը մի իմաստով են, այն՝ որ դէպքը դաւադրութեան արդիւնք է, որ դաւադրութիւնը գլուխ է բարձրացնում...

Բայց նենգամիտ պրովօկատորները, «չէյթանի» սպասաւորները մտածում են, խորհրդածում են այս բանի մասին... Գործի իսկութիւնը կը պարզէ՞ն արդեօք...

Մենք միշտ պրովօկատոր, գրգռիչ ասելով անցնում ենք։ Ամեն փորձանքի աղբիւրը, դրանք են, պատճառը դրանք են, կրկնում ենք. մի բան պատահելուն պէս իսկոյն՝ «նորից գրգռիչները գործեցին» ասելով մեր զզուանքն ենք յայտնում։ Բայց քանի որ մեր հայրենիքում այդպիսի գրգռիչների գոյութիւնը հաստատում ենք, քանի որ ամեն նենգութեան աղբիւրը դրանք են ասում ենք, ինչո՞ւ ուրեմն դրա առաջն առնելու մի ճար չենք որոնում։

Ափսո՜ս։ Միթէ մեր մէջ պրովօկատորներին չափ հաշտութեան ցանկացողներ չը կան, միթէ մարդկանց դէպի վայրենութիւն հրաւիրողների փոխարէն, ազնուութեան, բարեկամութեան, վսեմութեան, և փրկութեան, մի խօսքով մարդկութեան կոչողներ չը կան։

Ժամանակ է, ժամանակ է, որ փորձանքի հեղեղների առաջն առնենք։ Ժամանակ է, որ երկու կողմերի հաշտարար, խաղաղասէր անդամները դաւադիրների և դաւերի դիմաց կանգնած՝ թոյլ չը տան, որ նրանց չար մտքերը ծաւալ գտնեն։ Ժամանակ է, որ երկու ազգերն ևս իրանց արժանապատւութիւնն և ինքնապահպանութիւնը գիտակցելով՝ վերջ դնեն այդպիսի մի բարբարոս թշնամութեան։ Ժամանակ է, որ իբրև մարդիկ ըմբռնենք, թէ մեծ մեղք է ձեռք բարձրացնել մեր եղբօր վրա։ Ժամանակ է, որ ըմբռնենք Ռուսաստանի ներկայ կացութիւնը և միաբանութեամբ, համերաշխութեամբ բոլոր ազգերս արժանաւոր փառք բանակալ կառավարութեան դէմ կանգնելով՝ մեր նպատակին հասնենք, կառավարութիւն, որ մեզ բոլորիս հարստահարում է նոյն աստիճանով։

Փառք Աստուծոյ, այժմ երկու կողմից խաղաղասէրները հետզհետէ աւելանում և աճում են։ Երկու կողմից ինչպէս գալիս են գրգռիչների ձայները, նոյնպէս բարձրանում են հաշտարարների աղաղակները։

Մեր քաղաքում հրատարակվող «Դավէթ-կոչ» լրագիրն ևս դարձեալ երկու կողմի լաւագոյն անդամների ձեռքով է լոյս տեսնում և այդ ուղղութեամբ մեծ գործ պիտի կատարէ։

Մենք հաւատացած ենք, որ Երևանի մահմեդական և հայ լաւագոյն մարդիկ կաշխատեն իրանց կոչերով և ջանքերով մի պատնէշ կանգնել դաւադրական դէպքի երկիւղալի հետևանքների առաջ և կը խեղդեն այդպիսի դէպքերի հնարաւորութիւնը։

Եւ ամբողջ Կովկասի զաւակների հետ միասին ձայն ձայնի տուած՝ սրտանց կը գոչենք։

Կորչեն դաւադիրները!

Կեցցեն հաշտարարները!»

Այո, բաւական չէ միայն կրկնել թէ պրովօկացիան գործում է։

Պէտք է մտածել ցաւը իր սաղմի մէջ խեղդելու մասին, որպէս զի հրդեհը չը ծաւալվի։

Մենք մտել ենք եղբայրասպան կռւի երրորդ շրջանը, ուր առաջին շրջանի նման պայծառ է գիտակցութիւնը։

Շէյթանը դարձեալ վատ դրութեան մէջ է զգում իրան։ Նա ամեն ճիգ պիտի թափէ դարձեալ մթնացնելու գիտակցութեան պայծառ լոյսը։

Հայ-Թուրքական մամուլի նուիրական պարտականութիւնն է վառ ու պայծառ պահել այդ թանկագին լոյսը։

Շարունակենք արձակել դաւադիրների նիւթած վտանգի դէմ սթափման աղաղակ։

Շարունակենք խօսել երկու ժողովուրդների խղճմտանքին բարձր ու համարձակ։

Եւ եթէ պիտի հարկադրվենք միմեանց ձեռքից ընդունած անարգ մահով ընկնել, ընկնենք գոնէ գիտակցաբար, մեր օրհասական գերագոյն հառաչանքը նզովքի սլաքի նման բևեռելով մեր նահատակութեան հեղինակի—մարդակեր բռնակալութեան ամբարիշտ սըրտում...

Տ. Չ.

ՄԵԿԸ ՔԱՐԷ ԳԼՈՒԽՆԵՐԻՑ

Երևան, յունիսի 4-ին

Վերջին երկու տարիները Ռուսաստանի համար նշանաւոր տարիներ են, որոնք ոսկէ տառերով կարձանագրվեն պատմութեան էջերում։ Դարերով բռնադատված միտքը ազատութիւն է գտնում, ազատ խօսքը սուինների միջից էլ հնչում է համարձակ, միլիօնաւոր ժողովուրդը թօթափում է ստրկութեան շըղթան, ազատագրական շարժումը բացում է իրան համար ճանապարհ ձգված սրեան և գիւակների միջով և այդ ընդհանուր շարժման մէջ իր կոչն է արձակում նաև կապիտալի ստրուկ-աշխատաւոր դասակարգը։

Աշխատաւոր դասի մի հատուածն է գործակատարութիւնը, որը իր հերթում արձագանք տալով ընդհանուր շարժման, սկսած Պետերբուրգից, Մոսկվայից մինչև յետին քաղաքը, հրապարակ նետվեց բողոքելու խազէյնական ճնշումների դէմ և ուժով ձեռք բերելու իր մարդկային իրաւունքները։ Գործակատարական մի այդպիսի շարժում, շատ բնական կերպով, տեղի ունեցաւ նաև Երևանում, որին «Մշակի» № 105-ի մէջ մենք նուիրեցինք մի յօդուած, «Քարէ գլուխներ» վերտառութեամբ։

Մի ակնարկ ձգելով երկու տարի ձգձգվող Երևանի վաճառականների և գործակատարների անպտուղ բանակցութիւնների վրա, քարէ գլուխներ անուանեցինք վաճառական լիազօրներին առանձնապէս երկու պատճառով, նախ՝ որ նրանք առաջարկել էին 13 և 15 ժամվայ աշխատանք, ուղիղ երկ-երկու ժամ աւելի քան ժամանակաւոր կայացրած համաձայնութիւնը, որը և գործադրվում էր և երկրորդ՝ որ միջնորդ դատարանը ընդունելով նրանք առաջարկում էին անդամներ միմիայն վաճառականներից և այն էլ վաճառականների ընդհանուր ժողովում ընտրված, որ կարող էին ձայն տալ 20 գործակատարներ։ Միջնորդ դատարանի մասին այդպիսի առաջարկութիւն թերևս վայրենի զուլուսները չանէին, բայց արեցին Երևանի ինտելիգենտ համարված վաճառական լիազօրները։ Եւ ահա մեր այդ յօդուածի դէմ «Մշակի» № 118-ի մէջ դուրս է եկել յիշեալ քարէ գլուխ լիազօրներից մէկը—Ի. Տէր-Իսահակեանը—իբր մեր աղաւաղած ճշմարտութիւնը վերականգնելու, բայց իսկապէս սոփեստութիւններ և գրական ապիրատութիւններ գործելու համար։

Նախ՝ նա չէ հերքում, որ իրանք՝ վաճառական լիազօրները՝ առաջարկում էին աշխատանքի համար 13 և 15 ժամ, երկրորդ՝ չէ հերքում նաև մեր առաջ բերած տարօրինակ վանդալական առաջարկութիւնը իրանց կողմից միջնորդ դատարանի նկատմամբ և ոչ միայն չէ հերքում, այլ և յանցագործի գիշմամբ յայտնում է, որ գործակատարների առաջարկած ձևը այս տարի մայիսի 18-ին կայացրած ընդհանուր ժողովում ընդունվել է։ Այո, պ. Տէր-Իսահակեան, փոխել էք կարմրելու չափ ամօթալի ձեր տարօրինակ առաջարկութիւնը, այլ կերպ լինել չէր էլ կարող։

Սակայն ձեր անօրինակ այլանդակութիւնը, պ. լիազօր, փնտռենք նոյն իսկ ձեր պատասխանի մէջ։

Չակերտների մէջ, որպէս մեր խօսքերը, դուք առաջ բերելով հետևեալ կտորը՝ «ի զուր չէր անցել նրանց համար աշխատող մասսաների վիթխարի շարժումը Ռուսաստանում, իրաւազուրկների տարերային ուժով առաջ բերած յորձանքները եկան զարկվեցին նաև մեր աշխատաւորների սրտերին և այդ ընդհանուր ու վիթխարի շարժման արձագանք տուեց մեր գործակատարութիւնը իր Թռուցիկ խմբով, որը սկսեց պատուհաններ կոտրատել և սրան նրան սպառնալիքներ կարդալ առանց սպասելու հարցի պարզվելուն», յայտարարում էք, որ իբր մենք գովաբանում ենք մեր դասակարգի քաջագործութիւնները—այսինքն պատուհաններ կոտրատելը։ Նախ, պարոն, ծրտեղից էք վերցրել չակերտների մէջ առաջ բերած պարբերութեան վերջին մեր 17 բառերը, մեր յօդուածի ո՞ր տեղում դուք կարդացել էք գործակատարութեան Թռուցիկ խումբ և նրանց յաջորդող բառերը և երկրորդ՝ մեր յօդուածի ո՞ր կէտում դուք գտել էք գովասանք ապակիներ կոտրատելու նկատմամբ։

Դուք, պ. Տէր-Իսահակեան, ֆալսիֆիկացիա էք արել, չակերտների մէջ առաջ բերելով ամբողջ 17 բառ, որոնց մենք չենք գործածել և դուք կեղծել էք ամբողջ մի պարբերութիւն, որից փոխվել է նրա իմաստը. լուսամուտներ կոտրատելը ոչ միայն չենք խրախուսել, այլ անուանել ենք sale գործ։ Եւ դուք այդ կեղծումները արել էք, կարծելով որ նրանով կը սաղացնէք, ինչպէս ձեր խանութի ապրանքը։ Ամօթ է այդ, վերցրէք մեր յօդուածը կարդացէք, համեմատէք ձեր չակերտածի հետ և ամաչեցէք, ամաչեցէք որպէս նախկին ուսուցիչ։

Ինչ վերաբերում է ձեր միւս առարկութիւններին, որ երկու տարի առաջ գործակատարները ոչ մի պահանջով չեն դիմել վաճառականութեանը, այլ մի խնդրագրով դիմել են քաղաքային խորհրդին, որտեղից կորել է խնդիրը առանց հարցը արծարծելու, որ գործակատարների լիազօրները արժանացան նահանգապետի սպառնալիքին, իրանց ազդուկների շնորհիւ, որ գործակատարութեան պահանջները պրօգրեսսիվ կերպով անում են, որ Երևանում դեռ ևս տիրում են նահապետական կարգեր, որ Երևանի հայ վաճառականութիւնը տուժում է շնորհիւ Թուրք վաճառականութեան, որը շարունակում է իր գործը առաջվայ կարգով և վերջապէս, որ գործակատարութիւնը աւելի ազատ ժամեր ունենալով՝ աւելի ևս պէտք է թափառի բուլվարներում, զուրկ բարոյագիտութիւնից, մենք կը պատասխանենք դրանց երկ-երկու խօսքով։

Առաջինը՝ մինչև այժմ էլ գործակատարութիւնը համոզված է, որ երկու տարի առաջ քաղաքային խորհրդին ուղղած խնդրագիրը անյայտացաւ վաճառականի մի ճարպիկ ձեռքով։ Երկրորդ՝ որ նահանգապետի սպառնալիքին արժանացած գործակատար-լիազօրների անունները տեղ էին հասել մի կեղտոտ ձեռքով։ Երրորդ՝ մի կարծէք որ այժմեան սահմանած կարգը աշխատանքի ժամերի վերաբերեալ յաւիտենական է և գիտցած եղէք, որ գործակատարութեան պահանջը ժամանակի հետ կաճի, մինչև նորմալ կարգը—այն է 8 ժամվայ աշխատանքը։ Չորրորդ՝ Երևանում կարգերը նահապետական չեն, այն վաղ էր, երբ խազէյին և գործակատար համարվում էին հայր և որդի և միասին ուտում էին 5 կօպէկի գնած սանկակն ու ջուրը, այժմ խազէյինը աղա է, իսկ գործակատարը գեղա, խազէյինը ճաշում է առանձին և յաճախ նրա աւելցուկով կերակրվում է գործակատարը։ Հինգերորդ՝ ձեր յամառութիւնը միմիայն նիւթականի համար չէր, այլ աղայականութեան, այլապէս ինչո՞ւ չէիք համաձայնում միջնորդ դատարանի ընդունված ձևին, եթէ նոյն իսկ ընդունենք, որ ժամերի կրճատման պատճառով Թուրք վաճառականութիւնը կը խլէր հայ վաճառականութեան վաստակը, թէև այդ պատճառաբանութիւնը մենք չենք ընդունում։ Եւ վեցերորդ՝ աւելի լաւ կանէիք բարոյագիտութեան դասեր ձեր դասակարգին տայիք, համոզված լինելով, որ Երևանի գործակատարութիւնը, թէև չքաւոր, բայց բարոյապէս և մտաւորապէս աւելի բարձր կանգնած քան վաճառականութիւնը, ինչպէս այդ կը խոստովանեն ձեզանից շատերը։ Երևանի գործակատարութիւնն է, որ բացել է իրան համար մի համեստ ընթերցարան, որից ձրիաբար օգտվում են և աշակերտները և արհեստաւորները։ Երևանի գործակատարութիւնն է, որի մէջ աւելի անկեղծութիւն կայ քան վաճառականութեան։

Նայեցէք, պարոն, վերջապէս ձեր ընկեր լիազօրին, ձեր աթոռակցին, որը խանութի աշակերտներին փայտով ծեծելով համարում է այդ իր ընտանեկան գործ։ Համեստութիւն ունեցէք, պարոն, գոնէ լռելու, գոնէ չը փորձէիք շահագործել մամուլը, բաւական չէ ձեզ, որ շահագործում էք գործակատարութիւնը՝ Ամօթ է, ամօթ...

***

ԿԱՑԱԿ ԹԷ՞ ՀԱՇՏՈՒԹԻՒՆ

Շուշի, յունիսի 12-ին

Դարձեալ կոմէդիա... Գեներալ Գօլօշչապօվը իր թնդանօթների որոտի հետևանքով հրամայեց, որ քաղաքիս հայերը ու Թուրքերը միմեանց հաշտութեան ձեռք մեկնեն։ Հաշտութեան համար «բանակցութիւններ» տեղը նշանակված էր քաղաքային ուպրավայում։ Հայ «ներկայացուցիչները» որոշած ժամին (ժամը 11-ին) գնացին այնտեղ, — սպասելու Թուրք ներկայացուցիչներին, բայց Թուրքերը որոշած ժամին չը յայտնվեցին։

Սակայն հայ ներկայացուցիչները, Թաթարական վանդալականութիւնը խրախուսող իշխանութեան հետ, մոռանալով, որ ա) Աղդամի գազան Թուրքերն էին, որ Թունալից պրովոկացիայի աջակցութեամբ, 100-աւոր հայ անմեղ ճանապարհորդներին՝ մարդկանց, հասակաւոր կանանց ու երեխաների անլուր տանջանքներ տալով մորթոտել են ոչխարի պէս, իսկ օրիորդներին ու մատաղահաս կանանց գերելով, հարեմի զարդ են դարձրել. բ) Թուրքերն էին, («խաղաղ քոչւորները»), որ մի երկու օր սրանից առաջ քաղաքիցս մի երկու վերստ հեռու սպանել են երեք պաղչպանեցու ու այլանդակել դիակները, և 14 հոգու էլ գերել, որոնց վիճակը մինչև այսօր էլ յայտնի չէ սպանված են թէ ողջ են մնում. գ) Թուրքերն էին, որ մի երկու օր սրանից առաջ, հէնց քաղաքումս գերելով սպանել են 3 Երկաթալու և 5 Հիւնոտ անմեղ գիւղացիներին, որոնք գտնվում էին Թուրքաց բազարում, և այս բոլորը կատարվել է այն ժամանակ, երբ գեներալ Գոլոշչապովը գտնըվում էր այստեղ՝ քաղաքումս,—հետևապէս Թուրքերն են, որ այդպիսի սպանութիւններով, գաւաճանելով ու խախտելով կայացած հաշտութիւնը, բացարձակ հայերին մարտահրաւէրի են կանչում. կրկնում ենք, որ այս բոլորը մոռանալով, հայ ներկայացուցիչները գնում են Թուրքաց Թաղը, գաւառապետի դիւանը, ուր և լինում է Գոլոշչապովը։

Այդտեղ բաւական սպասելուց յետոյ յայտնվում են Թուրք ներկայացուցիչները։ Գեներալը հարցնում է. «Ну, что, помирились»? «Да, да, Ваше превосходительство, помирились», Թնդում է ներկայացուցիչների ձայնը, ապա տեղի են ունենում «ամուր» հաշտութեան մասին մաքերի փոխանակութիւններ, և միակ երաշխաւորիչ առհաւատչեան ապագայ ամուր հաշտութեան համար լինում է այն, որ հայ վաճառականները Թուրքաց բազարում խանութներ վարձեն ու իրանց առևտուրը այնտեղ սկսեն, իսկ Թուրք բախկալներն էլ հայոց բազարում սկսեն իրանց առևտուրը. և այսպէս ահա «կնքելով» հաշտութիւնը հայ և Թուրք ներկայացուցիչները՝ «չէյթանա նահլաթ, մարդիմազարն օ՛վը Ալլահ եըխսըն» ասելով հեռանում են միմեանցից՝ հաշտութիւնը վերջացած համարելով։ Բայց ո՞վ է այդ չէյթանը, այդ մարդը։

Իսկ արեան բաղնիքներ կազմող Թաթարական վոհմակները մնում են անպատիժ, որպէս զի այդ տեսակ կոմեդիաներով միջոց ու ժամանակ վաստակեն միշտ կոտորելու ու Թալանելու...։

Եւ սա կոչվում է հաշտութիւն. բայց քանի օրվայ հաշտութիւն։

Արմ. Աղախանեան

ՌԵԱԿՑԻԱՅԻ ԿՈՂՄԸ ՉԷ՞Ք

(Նամակ խմբագրութեան)

Ինձ Թւում էր, որ Մ. վարդ. կը լռէր խելոքութեամբ. բայց այս քանի՛ ամիս է, որ բաղդը չէ բերում նրան, քանի խօսում է, այնքան աւելի է խրվում։ Նա փորձեց իր գիտնականութիւնը ցոյց տալ Սիրակ. Տիգրանեանի քննադատութեան, բայց նամանաւանդ նրա ծխական կանոնադրութեան առիթով հրապարակ գալիս. սակայն տգիտութեան վկայական ստանալով՝ խուցը մտաւ քըքրելու թէ իր գիտնականութեան վկայականը ո՞վ է տուել։ Բանից դուրս եկաւ, որ իր գիտնականութիւնը սկսվել է 1892 Թւից, այսինքն այն օրից, երբ գիտական ճանապարհորդութիւն էր կատարել և պատահել մի Թուրքի...։ Երկրորդ անգամ տգիտութեան վկայական ստացաւ նուաստիցս, որի մէջ աւելացաւ մի նոր գիտական առարկայ էլ—հնարովի բաներ դուրս տալ, սուտ յօրինել։ Այդ բանն ապացուցվեց իր ժամանակին։ Այժմ այդ գիտնական վարդապետը կաշուից դուրս է գալիս ապացուցելու՝ թէ ինքը ռեակցիայի կողմը չէ, հեռի լոնդայ, ազատամիտ է։ Իր գիտնականութիւնը և ազատամտութիւնը ապացոյցներ էլ ունի. նախ, մի աշխատութիւն, որ Վեհափառի մօտ է և երկրորդ, քահանաների ընտրութեան կանոնադրութիւնը, որի նախարդակը թէ նախայտառակը ինքն է կազմել։ Այս վերջինը—նախարդակը մենք տեսանք, դրա առիթով էր, որ նա տգիտութեան դիպլոմ ստացաւ։ Այստեղ, սակայն, հարկաւոր է առաջ բերել այդ ազատամի՜տ, լուսամի՜տ վարդապետի մի հիմնական հայեացքը, որ միանգամայն պատկերացնում է նրա ամբողջ դէմքը։—Մինչ ռուս տէրութեան մեզ համար հրատարակած ժամանակաւոր կանոններով ձայնի իրաւունք է տրվում ամեն մի հայի, որ 25 տարեկան է, Մատթէոս սուրբ վարդապետի նախարդակը, որ ժամանակաւոր այդ կանոններից 4 ամիս յետոյ է կազմվել, ձայնի իրաւունք է տալիս ոչ թէ ամեն չափահաս հայի, այլ իւրաքանչիւր ընտանիքի մէջ միայն մի մարդու։ Ճշմարիտ եմ ասում, մարդ չափազանց անպատկառ պիտի լինի, որ այդ, մեր առաջ բերած փաստից յետոյ դեռ յանդգնի ասել, թէ ինքը ազատամի՜տ է, ռեակցիայի կողմը չէ։ Ռուսաստանի յեղափոխականները դալաթ են արել, որ չեն գալիս իրաւունքի մասին դասեր առնում. ազատամտութեան օրինակներ վերցնում Մատ. վարդապետից. հարկաւոր է նրանց իմաց տալ։

Ես ասել էի, որ ապօրինի կենակիցներին հալածելը մի բարբարոս, անմարդասէր միջոց է, թէ այդ խստութիւնը ռեակցիոների քայլ է և ոչ ազատամիտի։ Փրփրում է այդ վարդապետը, պատերը բարձրանում, թէ ինչպէս կարելի է որ ինքը, հռչակաւոր ազատամիտը, լինի ռեակցիոնէր։ Այդ խնդրի առիթով ինքը համակարծիք է եղել, այսինքն ստորագրել է մի օրինագիր, որով ամենածանր հալածանքի են ենթարկվելու ապօրինի կոչված կենակիցները, այո՛, համակարծիք է եղել, որովհետև հին կանոն կայ։ Դէպքից օգտվելով աշխատում է նաև հեգնել ինձ։

Մի անգամ արդէն ասել եմ («Արշալոյսի» մէջ), որ սինօդը նախ քան թէ ապօրինի կենակիցների մասին վեհին դիմելը պարտաւոր էր ուսումնասիրել այդ երևոյթի պատճառները. մի բան, որ նա չէ արել։ Մանաւորապէս, այդպիսի լուրջ վերաբերմունք դէպի այդ խնդիրը չէի սպասում Մատթ. վարդապետից. չէի սպասում, որովհետև դրա համար նախ մեծամիտ չը պիտի լինի մի մարդ և ապա անձնապաստան։ Այդ երկու բանն էլ յատուկ է այն մարդկանց, որոնք տգիտութեան հետ նաև արագ բարձր աստիճանների են հասնում։ Թէ այդ այդպէս է, թէ Մատթ. վարդ. մեծամտութիւնն ու անձնապաստանութիւնն այժմ էլ Թոյլ չեն տալիս խոստովանելու, որ ապօրինի կենակիցների դէմ ձեռք առնված միջոցն անարդար և բարբարոս է, պարզ երևում է նրանից, որ այդ քայլը նա արդարացնում է եղած հին կանոններով. Խե՜ղճ ողորմելի. երբ մէկը խօսում է կանոնների անունից, պէտք է ուսումնասիրած լինի այդ կանոնները և գործէ ամեն դէպքում համաձայն եկեղեցու կանոնների։

Ա՛յ Մատթ. վարդ., երբ ես ձեզ ռեակցիոներ եմ անուանում, հիմունքներ ունիմ։ Դուք իբր սինօդի անդամ, երբ հարկաւոր է եղել հայ եկեղեցու սահմանած կանոնների ոգու և մաքի համաձայն գործել, դուք մոռացել էք այդ կանոնները, դուք տգիտաբար ոտնահարել էք այդ կանոնները և ղեկավարվել ինչ-որ, եկեղեցու չը սահմանած՝ խիստ ու անմարդասէր կարգերով։ Փաստե՞ր էք կամենում։ Մեր եկեղեցին խնամիական չհասութեան համար կանոն չի սահմանել, որով արգելվէին նոյն իսկ երրորդ աստիճանի խնամիական պըսակներ։ Դուք եթէ խստութեան—ռեակցիայի փայլփայլած զէնքի—կողմը չը լինէիք, չորրորդ և երրորդ աստիճանի խնամիական չհասութիւնը անմարդասէր, անարդար կը համարէիք։ Դուք եթէ բարեխիղճ լինէիք, կը հետաքրքրվէիք և կը սովորէիք այն, ինչ որ մեր եկեղեցու ժողովներն են սահմանել։ Մեր եկեղեցին չունի և ոչ մի կանոն, որով մի ամուսնութիւն լուծվելուց յետոյ, կողմերից մէկին արգելվէր պսակ. չունի և ոչ մի կանոն, որով Թէկուզ հէնց ամուլութեան համար չը լուծէր պսակ. ընդհակառակը Շահապիվանի ժողովի կանոնները ոչ միայն ամուլութեան պատճառով, այլ նաև առանց պատճառի Թոյլ է տալիս արձակել կնոջը Թէկուզ առանց պատճառի, որ դէպքում նա պարտաւոր էր կնոջը տուգանք վճարել և այլն։ Այդ բոլորին հակառակ, դուք, լուսամիտ Մատ. վարդապետ, սինօդի մէջ ստորագրել էք օրագիր, որով մերժվել են համանման խնդիրները։ Այդ դեռ քիչ է, երբ այդ մարդիկ յուսահատված դիմել են ապօրինի կենակցութեան. այո՛, այդ յատկապէս ձեր զոհերին դուք սկսել էք խիստ հալածել, զրկել տալ հոգևոր ամեն տեսակ մխիթարութիւններից։ Այդ դեռ քիչ է. գաւառներում սինօդի հրամանով նոյն հալածանքին են ենթարկվում նաև այն անպսակ, ի հարկէ, գիւղացի զոյգերը, որոնք չքաւորութեան պատճառով չեն կարողացել վանքապատկան 5—8 ր. հասոյթը տալ։ Հալածանքներ յարուցանելու համար, խստութիւնները շատացնելու համար դուք, ով ս. վարդապետ, միշտ համակարծիք էք եղել, դրա համար, եղած, Թէկուզ դէպքերին բոլորովին անհամապատասխան կանոններ գտել էք, ու այսօր այդ բարբարոս կանոնի ետևն էք Թագնվում։ Չափահաս մարդկանց ձայնի իրաւունքից զրկելու նախագծեր էք կազմում. բայց երբ հարկաւոր լինի գործադրել գոյութիւն ունեցող մի մեղմ, մարդասէր կանոն, դուք այդպիսի կանոնների առաջ կուրացել էք, չէք տեսել, ու նրանց վրայից Թռել, խստութիւնների, կապերի ձգելու կողմն էք անցել։ Դա, այդ վարմունքն ու քայլը ի՞նչ է, եթէ ոչ ռեակցիայի հովեր։ Գոնէ լռէիք, գոնէ սխալը խոստովանելու առաքինութիւնն ունենայիք։

Դուք հասարակութեանը մոլորեցնել էք ձգտում նաև մի անվայել բամբասանքով, իբր թէ ես որևէ ժամանակ ձեր դէմ անձնական բան ունեցած լինեմ։ Այդ առիթով, Թէև վայել չէ ինձ ասել, սակայն և հնար չէ լռել. Թող հասարակութիւնը գիտենայ։ Էջմիածնի ամբողջ միաբանութիւնը գիտէ, որ դուք քանիցս ինձ մօտ ապրել և պատսպարվել էք. նախ, երբ աշխարհական էիք և միաբան էիք գրվում Էջմիածին. երկրորդ 1899 Թւի աշնանը երբ վերադարձաք պաշտօնատեղից և ինձ մօտ հիւրասիրվեցիք։ Այդ երկու դէպքումն էլ իմ բնակարանումս ապրեցիք և հիւրասիրվեցիք ամիսներով։ Մինչև ձեր ծրագրի քննադատելը, ամբողջ Էջմիածինը գիտէ, որ ես ձեր դէմ ոչ մի Թշնամութիւն չեմ ունեցել. ո՞վ գիտէ, գուցէ դո՛ւք ձեր սրտում ունեցել էք որ և է ոխ՝ հատուցանել հիւրասիրութեանս փոխարէն. այդ ինքներդ պիտի գիտենաք։ Բրդերի մէջ այդպիսի սովորութիւն գոյութիւն ունի. ո՞վ գիտէ։

Այսպէս ուրեմն, անձնական Թշնամութիւն տածելս էլ սուտ է։ Այսքանն արդէն բաւական է ձեր ազատամտութեան իբր ապացոյց։ Սա կը լինի իմ վերջին խօսքը։

Արսէն վարդապետ

Ալէքսանդրապօլ

ԵՐԷԿՎԱՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԿՐԿՆՎՈՒՄ Է

Կարմիր սուլթանը՝ մահամերձ Թիւրքիայի այդ գուցէ վերջին բռնակալը, նրա պատմական Ներոնը—իր կեանքի վերջալոյսին վճռել է ասպարէզից անհետանալուց առաջ գործ դնել իր «հայրական խնամքի» տակ տառապող հայ բազմատանջ ժողովրդի վրայ բռնակալների հիւանդ ուղեղի արտադրած բոլոր հալածող միջոցները։ —

Ի՞նչ սոսկալի սիւրպրիզներ չառաջարկեց նա հային, մանաւանդ այս վերջին 10-15 տարիների ընթացքում շարունակ։ Ի՞նչ խժդըժութիւններ չը հնարեց նրա սատանայական միտքը բնաջինջ ու հալածական դարձնելու իր այդ ստրուկ, բայց և ամենաժրաջան ու գործունեայ տարրին—հային...

Սրածութիւն ու աւեր, բանտ ու տանջանք և այդ ամենից աւելի սոսկալին՝ հայի արտաքսումն իր երկրից, իբրև անդարձ գաղթականների, արդէն վերջին ծայր յուսահատութեան ու լքման են հասցրել այդ նահատակ ժողովրդին, որը գլխիկոր ու խելակորոյս չը գիտէ թէ ե՞րբ և ի՞նչ է լինելու այս ամենի վերջը...

Եւ սակայն հարուածները դեռ շարունակում են տեղալ նրա գլխին անընդհատ, մէկը միւսից աւելի դաժան, անտանելի, զարհուրելի... Ֆիզիքական հարուածներին, տնտեսական քայքայմանը այժմ էլ միանում են հոգեկան-մտաւոր-բարոյական հալածանքները... Մարդակեր բռնիները յօշոտում են հայի ոչ միայն մարմինը, այլ և հոգին... Հայի հալածանքն ու տանջանքը, նրա վիշտն ու տառապանքը վաղուց անցել են չափ ու սահմանը... բաժակը վաղուց լցված է արդէն... և այժմ ակամայ հարց է առաջ գալիս, թէ դժոխային միտքը չը սպառե՞ց արդեօք իր բոլոր դիւական հնարագիտութիւնը...

Ո՛չ, ո՛չ, նա անսպառ է, որովհետև ուր ինքն այլ ևս անզօր է լինում նոր խժդժութիւններ ժամծնելու, նա իսկոյն աչքը դարձնում է դէպի իր նման հիւանդները, որոնք նրանից աւելի վարպետ են եղել մարդայօշոտ գազանութիւններ հնարելու գործում։ Եւ այնտեղ, ուր մի բոպէ նրա անզգայ միտքն անգամ սառում է իր սարսափելի արարքի հանդէպ, նա իսկոյն իր հայեացքը դարձնում է դէպի հիւսիս և ընդունակ աշակերտի նման ընդօրինակում իր ուսուցչից նրա նոր մեթոդները...

Թարմ օրինակները հաստատում են մեր ասածը։

Տաճկաստանից եկած վերջին լուրերի շարքում իրանց նորատեսակութեամբ ուշադրաւ են մանաւանդ երկուսը. 1) կառավարութիւնը փակում է հայերի առաջ իր բարձրագոյն դպրոցների դռները և 2) նա խլում է Սսի կաթողիկոսական կալուածները։

Սա մեր նորագոյն պատմութեան, Թէև խիստ վաղաժամ, կրկնութիւնը չէ՞ արդեօք, սա էլ նոյնը չէ՞ ինչ որ մենք դեռ երէկ և այսօր էլ տեսնում ենք մեր աչքերի առաջ, այստեղ...

Ռուսաստանը հալածեց հրէաներին իր դըպրոցներից, նա խլեց հայ-եկեղեցական կալուածները։ Եւ Տաճկաստանը ումի՞ց աւելի կարող էր բռնութեան դասեր վերցնել, եթէ ոչ իր այդ հարևան «հիւսիսի կոլօսից». սակայն մի կոշտ անմարսելի պատառ հազիւ թէ օգուտ բերի «հիւանդ մարդի» ստամոքսին։

Այդպիսի բռնութիւններն էին, որ ռուսահպատակ հային ակամայ դրին յեղափոխական ճանապարհի վրայ և նա իր արդար դատը շահելու համար ստիպված եղաւ դիմելու նոյն իսկ տերրորական գործողութիւնների։ Տաճիկ կառավարութեան այդ քայլը ևս արդեօք նոյն արդիւնքը չէ՞ ունենալու։ Արդեօք Թիւրքիայում ևս առաջ չը պիտի՞ գան Գոլիցիններ, Նակաշիձէներ, Անդրէյեւներ, Բոգուսլաւսկիներ և այլն իրանց «հաւատարիմ» ծառայութիւններով և նոյնպիսի էլ արժանի հատուցում ստանալու համբերութիւնն արդէն սպառած հայ ժողովրդի կողմից...

Այո՛, երէկվայ պատմութիւնը կրկնվում է. նրա սկզբնաւորութիւնը ճիշտ նոյնն է. արդեօք նրա ֆինալն էլ նոյնը չէ՞ լինելու, ինչ որ եղաւ այստեղ, մեզ մօտ...

Լ. Մարկոսեան

«ԿԱՄ ԴՈՒՔ ԿԱՄ ՄԵՆՔ»

Անցել է աւելի քան մի տարի այն օրից, երբ Թուրքերը սկսեցին իրանց յարձակումը հայերի դէմ։ Այդ երկար ժամանակամիջոցում թէ հայերի և թէ Թուրքերի կողմից եղան անչափ արիւնհեղութիւն, որին զոհ գնացին երկու կողմից էլ շատ մարդիկ։ Այդ կռիւը հայերի և Թուրքերի մէջ կարող էր դեռ երկար ժամանակ չը բռնկվել, թէ արտաքին որև է նպաստաւոր հանգամանք չը ստեղծվէր մեր հարևանների համար, բայց անսպասելի մի ներքին ոյժ եկաւ Թև ու Թիկունք լինելու մեր հարևան Թուրքերին, նորոգելու դարերի ընթացքում մեզ հասցրած հարուածների Թելը։ Այդ ներքին ոյժը կովկասի ադմինիստրացիան է, նրա ստեղծած պրովօկացիան է։ Լոյսի պէս պարզ է, որ եթէ կովկասի ադմինիստրացիան հակառակ լինի Թուրքերի ընդհարմանը մեզ հետ, ամենևին մէկ մարդու, ինչպէս կասեն, «քիթ էլ չի արնոտվի» և բաւական է որ նա յանուն արդարութեան սկսէ օրէնքի անաչառ գործադրութիւնը և ահա մի քանի ամսվայ ընթացքում ամեն բանին վերջ կը լինի։ Բայց այդ մեր բարի ցանկութիւնը ադմինիստրացիայի արդարութեան և անաչառութեան մասին միմիայն երազ է և երազ էլ պէտք է մնայ մինչև որ Ռուսաստանի ներքին կեանքը նոր հիմքերի վրայ չը վերակազմվի։ Ներկայ վարչութիւնը և սրանց նախորդները այժմեան ցաւը մեզ համար ստեղծել են որոշ ծրագրով և, ինչպէս երևում է, դեռ ցանկութիւն ունեն մեզ աւելի տանջելու։

Բայց ի՞նչը ստիպեց Թուրք ժողովրդին այդպէս շատ արձագանք տալու մութ ոյժերի ցանկութեանը, կռվին։ Ինչքան էլ կամենանք մենք լաւատես լինել մեր հարևան Թուրքերի վերաբերմամբ և ինչքան էլ մենք կամենանք մեզ մխիթարել այն համոզումով կամ թէ կարծիքով թէ Թուրք մասսան, Թուրք ամբոխը զոհ է պրովօկացիայի և Թուրք ազնւականութեան՝ բէգերի, աղալարների և այլն, ես համոզված եմ, որ պրովօկացիան և Թուրք բէգերը այնքան էլ բերրի հող չէին գտնի Թուրք մասսաների մէջ և Թուրք մասսան այդքան մի սիրտ, մի հոգի դարձած՝ կատաղի և յամառ կռիւ չէր մղի իրա դարաւոր հարևան հայ ազգի դէմ, եթէ այդ մասսան, որին մենք սովոր ենք զանազան ածականներ տալ, օրինակ՝ անկիրթ, վայրենի և այլն, կրկնում եմ, եթէ այդ Թուրք մասսան, միացած իր բէգերի և Թուրք ինտելլեգենտ ոյժերի հետ, իր որոշ նպատակը, ծրագիրը չունենար։ Բաւական է յիշել շատերից միայն հետևեալ բառերը. «եա սիզ, եա բիզ», որ նշանակում է «կամ դուք, կամ մենք»։

Այդ բառերը, որ կովկասի ամեն մի անկիւնում Թուրքը շպրտում է յուսահատաբար հայի հասցէին, մի մեծ դաւանանք է, մի մեծ ծրագիր է՝ ուղղված մեր բազմաչարչար հայրենիքի և ոչ պակաս բազմաչարչար հայ ժողովրդի դէմ։ Ես ժխտում եմ բոլորովին այն յամառ կարծիքը, թէ Թուրքերը միմիայն Թալանի ծարաւի լինելով են այդքան ոգևորված իրանց դաւը մղում մեր դէմ։ Ճշմարիտ է, Թուրքերը շատ տեղերում ցոյց են տուել իրանց այդ անպատկառ ինստինկտը, բայց ես պնդում եմ, որ միմիայն Թալանելու համար այդ տեսակ օրհասական կռիւ Թուրք ժողովուրդը մեր դէմ չէր մղի, եթէ չունենար իր որոշ քաղաքական դաւանանքը։ Ասացէք խնդրեմ, միթէ Թուրքերը հայերից պակաս զոհեր են տուել, կամ քիչ վնասներ են կրել այդ ընդհարումներից։ Եւ ինչո՞ւ այդքան դառն փորձերից յետոյ Թուրքը էլի պատրաստ է յարձակվել, կոտորել, փչրել, ջարդել ինչ որ հայ է կամ հայկական, եթէ մինչև անգամ հարկաւոր լինի երկու կամ երեք յարկանի հազարաւոր տները անվարձ Թողնել Բագւում, կամ թէ 100,000 պուդերով խաղող գնողներից զրկվել, ինչպիսին էին Աղդամի հայ գործարանատէրերը։ Ցաւալի է, որ Թուրք ժողովրդի վերաբերեալ մեր մամուլի մէջ այդ ընդհարումների մասին մինչև այսօր որոշ հայեացք չէ ստեղծվել և այդ երկար ժամանակամիջոցում մեր աշխարհայեցողութիւնը միշտ պտտվել է միմիայն պրովօկացիայի և բէգերի շուրջը։

Իմ խորին համոզմունքով ես պարտք եմ համարում բացարձակ ասել, որ հերիք է մեզ խաբենք և թէ մեր հարևան ազգին ստորացնենք ասելով թէ խաւար, անմիտ ամբոխ է այդ ազգը, խաղալիք դարձած պրովակացիայի և Թուրք ազնուականութեան ձեռքին։ Այդ լըսելուց քթի տակին քըքջում է խորամանկ բէգը և ծածուկ ու կուշտ ծիծաղում է մեր միամտութեան վրա Թուրք ժողովուրդը, որը երբեք անմիտ չէ, ունի տակտ, հետևողութիւն և լաւ է հասկանում իր արած ամեն մի քայլը։ Չը գիտեմ որքան կարելի է վայրենի անկիրթ ամբոխ համարել Շամախու, Բագուի Լենքօրանի, Սալիանի, Նախիջևանի, Երևանի, Թիֆլիսի և առհասարակ քաղաքներում և շրջակայ գիւղօրայքում ապրող Թուրքերին, իսկ ինչ վերաբերում է այն Թուրքերին, որոնք ապրում են Մուղանի և այլ դաշտավայրերում, նրանք, ճիշտ է, մեր տեսակէտից վայրենի են, բայց «լինել չը լինելու» հարցում, «ինքնապաշտպանութեան և գոյութեան» հարցում մեզնից եթէ ոչ առաւել, գոնէ պակաս էլ չեն և շատ կէտերում մեզնից էլ լաւ են ըմբռնում իրանց շահերը պահպանելու կարգը։

Պնդել թէ Թուրք ժողովուրդը անմտաբար զոհվում է պրովօկացիայի աչքի սիրոյ համար, կամ թէ բէգերի համակրելի կամքի համար, դա կատարեալ աբսուրդ է։ Ես համոզված եմ, որ Թուրք բէգերը, Թուրք ինտելիգենցիան և Թուրք ժողովուրդը, օգտվելով կառավարութեան բռնած ուղղութիւնից, նրա առաջացրած պրովակացիայից և վերջապէս օգտվելով յարմար առիթից, շարունակում են այն դառն հարուածը, որը դարեր շարունակ ուղղված է եղել մահմեդական ժողովուրդների կողմից մեր գոյութեան դէմ։ Ինչպէ՞ս Թուրքը մարսի մեր ոչ թէ գոյութիւնը, այլ և այն, որ մենք իսկապէս ձգտում ենք դէպի բարեկեցութիւն, դէպի առաջադիմութիւն, սկսում ենք վերջապէս մեր մարդկային և ազգային ոտնատակ եղած իրաւունքները ոչ միայն պաշտպանել, այլ և պատրաստ ենք և պատւով մեռնել և ոչ ստրկանալ։ Թուրքը այդ տանել չէ կարող, նա միշտ ձգտել է հային իրանից ստոր տեսնել, այդ ցանկացել է նա առաջ, այդ ցանկանում է նա հիմա, այդ բանին ձգտելու է և ապագայում իբրև տիրապետութեան ծարաւի մի ժողովուրդ և թէ մենք կամենում ենք մեր կեանքի հարցերում լինել անկախ մեր հարևանների քմահաճոյքներից, մենք էլ մեր անելիքը ոչ միայն խորը կերպով պէտք է քննենք, այլ և որոշ կէտի վրա կանգնենք։

Լինել թէ չը լինել, ահա մեր նշանաբանը և եթէ լինել, արդեօք Թշւառ լքված, յուսահատ, աննշան ինչպէս մինչև 80-ական Թւականները, թէ ապրել պատւով իբրև մի խոշոր փակտոր կովկասեան ազգերի շրջանում։ Ահա մեր առաջ դրած հարցը մեր հարևան Թուրքերի կողմից։ Նրանց այդ կոչը, այդ մարտահրաւէրը չէ կարելի անուշադիր Թողնել և ոչ էլ հարկաւոր է երազներով ապրել, ապա թէ ոչ սխալը կը գայ և մեզ կը տանի։ Սխալ է, եթէ մենք լաւատես լինելով և ինչ որ ապագայի զարգացած Թուրքերի հետ եղբայրացած երազների յոյսով՝ այս պատմական նշանաւոր մոմենտում մենք իբրև մի սիրտ, մի հոգի մի դիրքի վրայ արթուն կանգնած չը լինենք։ Ոչ մեր բարի ցանկութիւնները, ոչ մեր խաղաղ ապրելու տենչը մեր հարևանների հետ, երբեք չեն կանգնեցնի այն դաւը, որը նիւթել է մեր դէմ պրովօկացիան և որը այնքան ձեռնտու է մեր հարևան Թուրքերի ձգտումներին։

Թող մեր հարևան Թուրքերը լաւ հասկանան, որ մենք էժան չենք ծախի մեր գոյութիւնը, ինչքան էլ իրանց աջակից ունենան տնաքանդ պրովօկացիան։ Ճիշտ է, նրանք ցանկանում են լայն ասպարէզ ունենալ իրանց ձգտումների, իրանց առաջադիմութեան համար. գիտենք, որ ինչքան էլ լուսաւորվեն, ինչպէս և ամեն մի լուսաւոր ազգ, ցանկան իրանց ուրոյն կեանքն ունենալ, մենք հակառակ չենք նրանց. այդպէս ապրում են Եւրոպայում և ամեն մի լուսաւոր երկրում գտնըվող ազգերը. այդ բանին խելացի կերպով ձգտում են Ռուսաստանում գտնվող ազգերը ձեռք ձեռքի տուած, առանց վնասելու ուրիշի շահերին, հարևանի շահերին. Նրանց էլ ներելի է և նոյն իսկ ցանկալի իրանց գոյութեան որրանում, ուստի նրանք պէտք է լաւ չափեն և ձևեն իրանց անելիքը, ինչպէս որ իրանք ուզում են. միայն, իրանց արշինը պէտք է հեռու տանեն մեր մայր երկրից, մեր գոյութեան հիմնաքարից՝ Երևանեան և Ղարսի նահանգներից, Ղարաբաղի և Գանձակի հայաբնակ գաւառներից։ Եթէ Թուրքերը տանեն իրանց մտքից այդ երազը և Թշնամի չը լինեն մեր գոյութեանը, մեր ինքնուրոյնութեանը, ես համոզված եմ որ վաղն և եթ վերջ կը տրվի անմիտ կռւին։

Ռուսաստանի բոլոր ժողովուրդները ձեռք ձեռքի տուած ձգտում են ազատութեան ու վերածնութեան սուրբ գործին, իսկ Թուրքերը մեզ ստիպում են գոյութեան կռիւ մղել իրանց հետ։

Աղաբէգ Զաւտուրեանց

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՅՈՒԶՈՒՄՆԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

I

Պետերբուրգի գործակալութեան հեռագիրը համառօտ կերպով հաղորդեց ժողովրդական այն յուզումների և մասսայական շարժումների մասին, որոնք վերջին օրերս տեղի ունեցան ոչ միայն Պարսկաստանի քաղաքական կենտրոնում՝ Թէհրանում, այլ և Իրանի միւս քաղաքներում, օր. Շիրազում և ուրիշ տեղերում։

Հեռագրի տեղեկութիւնը Թէև լակոնական բնաւորութիւն է կրում, սակայն նա, մեր կարծիքով, պարզ և շեշտակի պատկերացնում է քաղաքական այն կրիտիքական դրութիւնը, որի մէջ ներկայումս գտնվում է պարսից կառավարութիւնը մասնաւորապէս և Պարսկաստանի բնիկ ազգաբնակութիւնը ընդհանրապէս։

Չափազանցութիւն չի լինի, եթէ ասենք, որ Պարսկաստանը վերջին կէս տարվայ ընթացքում երբեք կանգնած չէ եղել քաղաքական և սոցիալական մի շարք այնպիսի լուրջ խնդիրների առաջ, ինչպէս որ այժմ է նա կանգնած։

Պարսկաստանի ներկայ դրութիւնը բնորոշող այդ երևոյթի գլխաւոր և հիմնական պատճառը երկրի քաղաքական և տնտեսական աննախանձելի կացութիւնն է, որ իր բոլոր բացասական կողմերով աւելի կոնկրետ կերպով արտայայտվեց և երևան եկաւ այն ժամանակ, երբ ռուս-ճապօնական պատերազմից յետոյ Ռուսաստանում բռնկված և համատարած ազատարար շարժման հոսանքները սկսեցին հետզհետէ մուտք գործել նաև նրա հարևան և սահմանակից Պարսկաստանը, որոնց ազդեցութեան շնորհիւ խոր քնից զարթնեցին պարսիկ ժողովրդի գրեթէ բոլոր դասակարգերը, իրանց քաղաքական և տնտեսական տարբեր պահանջներով։

Ուրիշ խօսքով՝ Ռուսաստանի ազատարար շարժումը մեծ զարկ տուեց և խթան հանդիսացաւ Պարսկաստանի վերածնութեան գաղափարի սկզբնաւորութեան, որին մասամբ նպաստել են և Իրանի վերջին երկու միապետների Եւրոպայի զանազան երկրներում մի քանի անգամ կատարած ճանապարհորդութիւնները և դրանց Պարսկաստանում մտցրած զանազան ռէֆօրմները։ Այդ ռէֆօրմները մասամբ բաց արին դարերով խոր քնի մէջ անյոյս խարխափող պարսիկ աղքատ ժողովրդի աչքերը և նրան էլ պահանջկոտ դարձրին։

Այդ ազատարար շարժումն էր, որը պարսիկ ժողովրդական մասսային զգալի չափով գիտակցել տուեց, թէ ո՞ր աստիճանի իրաւազուրկ դրութեան մէջ է գտնվում նա ներկայումս, քաղաքական և տնտեսական տեսակէտից, որ նա դարերի ընթացքում ժառանգել է պարսից ժողովրդի տիրապետող և ճնշող դասակարգերից՝ հոգևորականութիւնից և ազնուականութիւնից։

Գլխաւորապէս այդ երկու դասակարգերն են եղել, որոնք յօգուտ իրանց դասակարգային շահերի և արտօնութիւնների դարերով շահագործել, կողոպտել և քայքայել են պարսիկ ժողովրդի համակրելի և իր մաքուր աշխատանքի դառն քրտինքով ապրող բացարձակ մեծամասնութեանը։

Դրանից սկիզբն է առել և երկրի ընդհանուր պայմանների բնական ընթացքով զարգացել է այն իրաւազուրկ և անտանելի դրութիւնը, որի ծանրութեան ներքոյ ներկայումս հեծում է պարսիկ ժողովրդի մեծամասնութիւնը։

Մեծամասնութիւն, որ այդքան երկար ժամանակի ընթացքում հասունացրել է իր մի շարք քաղաքական և տնտեսական պահանջները, նամանաւանդ վերջին երկու տարիները, երբ նա աւելի մեծ Թափով զգաց իր հայրենիքի այդ երկու տեսակէտից էլ քայքայված վիճակը։

Ժողովրդի անպաշտպան և իրաւազուրկ մեծամասնութիւնը 19-րդ դարու երկրորդ կիսում յաճախակի փորձեր է արել իր աննախանձելի դրութիւնը ուղղակի ներկայացնելու երկրի վեհապետներին և նրա նպատակայարմար բարւոքումը խնդրելու, բայց պարսիկ կառավարութեան գլուխն անցած հոգևորական և ազնուական ղեկավարները յօգուտ իրանց շահերի և անյատակ շահագործութեան Թոյլ չեն տուել, որ պարսիկ ժողովրդի մեծամասնութեան արդար բողոքը անմիջապէս հասնի Իրանի վեհապետների ականջին և աշխատել են ժողովրդական այդ ընդհանուր դժգոհութիւնը խլացնել, որպէս զի նա իր բնում խեղդվի և արձագանք չը գտնի։

Պարսկաստանի վերջին Շահնշահ Մուզաֆֆէր-Էդդինը միայն իր մարդասէր և ժողովրդասիրական բնաւորութեան շնորհիւ երբեմն աշխատել է իր կառավարութեան յանձնված երկրի և ժողովրդի տնտեսական դրութիւնը մասամբ բարելաւել, միշտ դիմադրելով հզօր ազնուականութեան և հոգևորականութեան հակառակ շահերին և մեծ դժուարութիւններից յետոյ իր կառավարութեան ամբողջ ընթացքում աջողվել է երկրի մէջ ներմուծելու ժամանակակից մի քանի ռէֆօրմներ, որոնցից գլխաւորները հետևեալներն են։

Որովհետև Մուզաֆֆէր-Էդդին Շահը շատ լաւ էր գիտակցում, որ պարսիկ ժողովրդական մասսան երկրի տիրապետող դասակարգերից անխնայ շահագործվում է գլխաւորապէս տգիտութեան շնորհիւ, դրա համար ներկայ միապետը իր գլխաւոր ուշադրութիւնը միշտ դարձրել է ժողովրդական ընդհանուր կրթութեան վրա և կարողացել է տէրութենական ծախսերով մի շարք դպրոցներ հիմնել ոչ միայն իր տէրութեան քաղաքական կենդրոնում, այլ և Իրանի աչքի ընկնող ուրիշ քաղաքներում։ Բացի դրանից, Մուզաֆֆէր-Էդդին Շահը հոգ է տարել նաև բարձր և մասնագիտական դպրոցների մասին, որոնց համար նա մի քանի տասնեակ եւրոպացի մասնագէտ ուսուցիչներ է հրաւիրել։ Այդ ուսուցիչների մեծ մասը զանազան առարկաներից այժմ դասախօսում է Թէհրանի պարսկական ամենաբարձր դպրոցում՝ այսպէս կոչված պարսկական համալսարանում։

Մուզաֆֆէր-Էդդին Շահի բարձր ուշադրութիւնից չէ խուսափել նաև պարսիկ ժողովրդի մեծամասնութեան իրաւազուրկ դրութիւնը, որի համար նա շատ անգամ արտայայտել է իր համակրութիւնը և կողմնակցութիւնը, նա մանաւանդ սրանից մի քանի օր առաջ, երբ նրա մօտ պալատում մի մինիստրական ժողով է եղել գումարված։ Այդ ժողովում նա տէրութեան բարձր պաշտօնավոր մարդկանց ներկայութեամբ իր կատարեալ համակրութիւնն է յայտնել այն բանի մասին, որ արդէն ժամանակ է, երբ պէտք է Պարսկաստանի միապետական կառավարութեան ձևը սահմանադրական կառավարութեան ձևի վերածել, որի համար պարսիկ ժողովուրդը մասամբ հասունացել է։ Շահի այդ համակրելի մտադրութիւնը եռանդուն կերպով պաշտպանել և գովաբանել է պալատի ժողովականներից մէկը՝ Բեռլինի ներկայ դեսպանը, որ վերջին ամիսները արձակուրդով եկել էր Թէհրան։ Այն ինչ միւս ժողովականների մեծ մասը Շահին դուր գալու և շողոքորթելու նպատակով հակառակել են նրան, պատճառաբանելով, որ իրանք շատ գոհ են Վեհափառ Շահնշահի անսահման միապետական կառավարութիւնից։

Ուրիշ կերպ էլ նրանք չէին կարող մտածել, որովհետև Պարսկաստանի ապագայ կառավարութեան սահմանադրական ձևը կը սանձահարէ նրանց իշխանական կամայականութիւնները և անզուսպ շահագործութիւնները ի վնաս ժողովրդական մասսայի։

Սրանից պարզ երևում է, որ Իրանի ներկայ Շահը իր բարձր ձայնը շատ անգամ բարձրացրել է ի նպաստ ժողովրդական խախտված իրաւունքների, բայց դրանք գրեթէ միշտ խեղդվել են Շահին շրջապատող, ժողովրդին անկշտում կերպով շահագործող և նրա արիւնը ծծող մթնոլորտին պատկանող բարձր և անզուսպ պաշտօնեաներից։

Շահի ռեֆօրմատօրական մտադրութիւններին մեծ արգելք է հանդիսացել և պարսից հոգևորականութիւնը, որ իր կաստայական օգուտների համար միշտ ազդու և հնչուն բողոք է բարձրացրել Իրանի քաղաքական կառավարութեան ամեն մի նոր, Թարմ և լուսաւոր հոսանքի՝ ներմուծութեան դէմ։ Իսկ Մուզաֆֆէր-Էդդին Շահի վերջին ամենագլխաւոր մտադրութիւնն է մի որոշ և ճիշտ օրէնսդրութեամբ սահմանել կալուածատէրերի և գիւղացիների փոխադարձ յարաբերութիւնները և Թոյլ տալ Պարսկաստանի ազգաբնակութեան բոլոր դասակարգերից ընտրված ներկայացուցիչներին մասնակցել երկրի և տէրութեան կառավարութեան գործերում։

Մի խօսքով Իրանի ներկայ մարդասէր Շահը իր հեղինակաւոր համաձայնութիւնն է յայտնել պարսից տէրութեան վերակազմութեան ձևի և լուրջ խնդրի վերաբերմամբ, որը պէտք է կատարվի սահմանադրական միապետութեան պահանջների գլխաւոր հիմունքների վրայ։

Միապետի տուած համաձայնութիւնը ցոյց է տալիս, թէ նա որ աստիճանի հեռատես և խելացի քաղաքականութիւն է գործադրում պարսիկ ժողովրդի հասունացած քաղաքական և տնտեսական պահանջների նկատմամբ, որոնց շնորհիւ երկիրը այժմ յուզման և խռովութիւնների է ենթարկված։

Բնական է, որ ժողովրդական այդ յուզումները և շարժումները այժմ պարսից Շահնշահի մտածողութեան գլխաւոր առարկան են կազմում և զգալի կերպով քայքայել են նրա առողջութիւնը։

Հէնց այդ քայքայված առողջութիւնը ի նկատի ունենալով բժիշկները խորհուրդ են տուել Շահին մի առ ժամանակ հեռանալ կառավարութիւնից և երեք տարով գնալ արտասահման բժշկվելու նպատակով, ինչպէս որ մենք սրանից մի քանի օր առաջ հաւաստի աղբիւրից լսել ենք Թէհրանում։

Շահն էլ մտադիր է այդ ժամանակամիջոցում երկրի կառավարութիւնը յանձնել Թագաժառանգին, որի Թէհրան ժամանելուց սպասվում է մեծ փոփոխութիւն պարսից կառավարութեան բարձր պաշտօնեաների նըկատմամբ։

Շատ հաւանական է ենթադրել, որ Պարսկաստանի ներկայ սադրազամը կը հեռանայ կառավարութիւնից, նրա փոխարէն նորից կը նշանակվի նախկին սադրազամը, որ ներկայումս Թէհրանում ամենատարածված կարծիքն է։ Այդպիսով պարսից տէրութեան գլուխն կանգնեն Թագաժառանգը և Շահի եղբայր Նայիբ-Սալթանէն՝ պատերազմական մինիստրը, որ Թագաժառանգի աներն է։

Միայն դրանք կարող են ներկայ պայմաններում Պարսկաստանի ներկայ քաղաքական և տնտեսական ծանր դրութիւնը մի քիչ մեղմացնել և նպատակայարմար լուծումն տալ թէ Թիւրքիայից Պարսկաստանին սպառնացող վտանգին, որ կարող է բացասական ազդեցութիւն ունենալ նաև Թիւրքահայերի և Ատրպատականի հայութեան ներկայ կացութեան վրա և թէ պարսիկ ժողովրդի սահմանադրական պահանջներին, որոնց էութեան և բովանդակութեան մասին մենք կը գրենք հետևեալ անգամ։

Լ. Բաբայեան

Թիֆլիս.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բագուից հաղորդում են «Т. Л.» լրագրին հետևեալը. «Բալախանում ոստիկանութիւնը եռանդուն կերպով հետևում է Թոյլ տուած սոց.-դէմօկրատական լրագիրների վաճառման, և անպայման արգելում է։ Ցրվիչներին ոստիկանութիւնը հալածում է, լրագիրների համարները գրաւվում են։ Կիրակի, յունիսի 11-ին, Բագւում բանւորները Թաղում էին իրանց ընկեր Կամենեցկուն։ Նրա դագաղը բոլոր ժամանակ ձեռքով էին տանում և յեղափոխական երգեր էին երգում։ Կարգը օրինակելի էր։ Ոստիկանութիւնը բացակայում էր։

—

Վրաց հոգևորականութեան համագումարը որոշել է քահանայ Վօստորգօվից պահանջել 2000 րուբլի, որը նա «Духовн. Вѣст. Груз. Экзархата» Թերթի խմբագիր եղած ժամանակ իւրացրել է, և միջնորդել ուր հարկն է նրա դէմ քրէական դատ սկսելու համար։

—

Լոյս յունիսի 14-ի գիշերը, ժամը 12-ին, երբ Իսլամ-բէկ Եգիզարովը տուն վերադարձաւ (Նիկօլայեվսկի փող.) և մտաւ հէնց կօրրիդօրը, սանդուխքի տակից դուրս եկաւ դաշոյնը ձեռքին մի անյայտ չարագործ. բայց Եգիզարովը չը կորցրեց իրան և գրպանից ատրճանակ հանելով արձակեց անյայտի վրա, որին ինչպէս երևում է վիրաւորեց, որովհետև չարագործը սկսեց տնքալ և դուրս փախչելով փողոց անյայտացաւ։ Եգիզարովի կարծիքով յարձակումը եղել է կողոպտելու նպատակով։

—

Ս. Հախումեանը Թոյլտուութիւն է ստացել հրատարակելու Բագու քաղաքում հայերէն լեզւով մի լրագիր՝ «Օրեր» անունով։

—

Փոխարքան հարկադրեց Անդրկովկասի երկաթուղու ճանապարհների հրամանատարին վերընդունել գործադուլի ժամանակ պաշտօնից հեռացված և դատի ենթարկված բոլոր պաշտօնեաներին։ (Ծրոմ)

—

Գանձակում հրատարակվող «Елисаветпольскіе Отголоски» լրագրի փոխարէն լոյս է տեսնում ուրիշ լրագիր՝ «Весельчакъ» անունով։

Ցունիսի 11-ին, գիշերվայ ժամը 12-ին, Սուրամում, տեղական զօրքը կրակ բացեց շրջակայ անտառներում երևացող «կարմիր հարիւրեակի» վրա, թւով մօտ 40 հոգի, որոնց թւում կային նաև տեղական բնակիչները. վերջինները հրացանաձգութիւնից յետոյ տուն վերադարձան։ (Гол. Кав.)

—

Ինչպէս ընթերցողներին յայտնի է, մարտ ամսի վերջերում Մինգրէլսկի 16-րդ գրենադերեան գնդում, ազատագրական շարժման նպատակով ընդհարում տեղի ունեցաւ, որի ժամանակ 6 հոգի վիրաւորվեցին։ Այդ դէպքի առիթով դատաստանի են ենթարկված 27 զինուորներ, որոնց գործերը քննվելու են մօտ ապագայում։ (Շրօմա)

—

Սէվաստոպոլից հաղորդում են «XX Вѣкъ»-ին, որ այնտեղ, քաղաքում, տարածված է հետևեալ կոչը. «Քաղաքացիներ, քաղաքի մէջ ջարդ է կազմակերպվում, սև հարիւրակները զինվում են, պատրաստվում։ Քաղաքացիներ, շտապեցէք քանի ուշ չէ, շտապեցէք, խնդիրը վերաբերում է մեր կեանքին։ Նուիրեցէք ինքնապաշտպանութեան զինման համար»... Ստորագրված է Սէվաստոպոլի զինուորական կոմիտէտ։

—

Մօտ օրերս Պետերբուրգում, երբ պրիստաւի օգնական կապիտան Կրեստեանովը ստուգում էր 2-րդ Րօժդեստվենսկի քաղաքամասի դիրքերի գորոդովոյներին, ողջոյն տալու ժամանակ՝ «здорово ребята», գորոդովոյները լռութեամբ պատասխանեցին։ Պրիստաւի օգնականը 2-րդ անգամ բարևեց գորոդովոյներին, բայց պատասխանը մի և նոյնն էր։ Այն ժամանակ ոստիկանական օֆիցէրը դիմեց կոմանդայի «направо кругомъ», գորոդովոյները իրանց տեղերից չէին շարժվում։ Ստորին աստիճանաւորների տարօրինակ վարմունքը իր վրա դարձրեց ոստիկանութեան բարձր շտաբի ուշադրութիւնը։ Քննութիւն սկսվեց։ Ամեն մի գորոդովոյին առաջարկած հարցերին, վերջինները միաձայն բացատրեցին իրանց վարմունքը նրանով, որ ցանկանում են մատնացոյց անել վարչութեանը իրանց ծանր պաշտօնի վրա։ Համարեա թէ, անփոփոխ, գորոդովոյները կատարում են իրանց պարտականութիւնները, դիրքից գնալով ոստիկանատուն հերթապահութեան համար, ուղարկվում են ծրագիրներ բաժանելու և այլն։ Շատերը մի քանի ամիսներ շարունակ բաղնիք չեն գնացել։ Պրիստաւ Իվանովը խոստացաւ գորոդովոյներին հնարաւոր զիջումներ անել։ Ստորին աստիճանաւորները գնացին իրանց դիրքերը։ Նրանց տրամադրութիւնը դարձեալ յուզված է։ (Бирж. Вѣд.)

—

Պետական Դումայի անդամ Վինավէրը յունիսի 8-ին Գոմելից ստացել է հետևեալ հեռագիրը. «Ռուս ժողովրդի միութեան» նախագահ Մօկասէվսկու մօտ ռումբ է գտնվել, որը երևի պատրաստված է եղել ջարդերի պրօվօկացիայի համար։ Մօկասէվսկին կալանաւորված չէ։ Միութիւնը բացարձակ կերպով ագիտացիա է մղում հրէաների դէմ»։ «Руск. Вѣд.»

—

Պետերբուրգի բիւրօկրատական բարձր շրջաններում յամառ կերպով խօսում են, որ իբրև թէ Պետերհօֆում արդէն ներկայացրել են մանիֆեստի մի քանի պատճէններ, որը այս մօտ օրերս կուղարկվի գիւղացիութեանը։ Դրա կազմողները ի նկատի են ունեցել առանձնապէս այդ մանիֆեստին տալ վերևից գիւղացիութեանը շնորհված մի նոր ողորմածութեան բնաւորութիւն, այլ ոչ իբրև զիջումն Պետական Դումայի կողմից արված պահանջների։ Նոյն լուրերի հիման վրա, ասում են, որ մանիֆեստի նախագծերը կը քննվեն Պետերհօֆում մի քանի օրվայ ընթացքում։ «Дума»

—

Վերին աստիճանի աղմկալի մի գործ է բացվել պահեստից նոր կանչված 18 զինուորական բժիշկներին պատասխանատւութեան ենթարկելու մասին, որոնք մեղադրվում են զօրքի մէջ հակակառավարչական ագիտացիա մղելու համար։

—

Պետերհօֆում հսկողութիւնը օրէցօր սաստկանում է։ Աւելացնում են թէ հեծելազունդի գվարդիան և թէ արտիլլէրիան, մանաւանդ գնդակացիրները և ռազմական աւտոմօբիլները։ Գնդակացիրները և աւտոմօբիլները մեծ հմտութեամբ թագցրված են։

—

Պետերբուրգի մամուլի վերաբերեալ մասնաժողովը յունիսի 8-ին հարց է յարուցել քրէականդատ սկսելու հետևեալ լրագիրների խմբագիրների դէմ. «Впередъ, Голосъ, Дума, Земля, Народъ, Курьеръ, Наша Жизнь, Призывъ Реформа, Русскій Народъ, Рѣчь, Современ. Жизнь и Трудовая Россія»։

—

Կիէվից հաղորդում են Р. В.-ին որ այնտեղ գրաւված են «Громадска Думка, Голосъ Киовски և մեծամասնականների Работникъ-ի առաջին համարը։ Տեղական լրագիրներին հրամայված է չը գրել ոչինչ զօրքերի խլրտումների առիթով։ Պետերբուրգի լրագիրները գրաւվում են։

—

Ռուսաց ծուխերի հոգևորականութեան ներկայացուցիչները, հրաժարվելով աւտօկէֆալութեան ձգտող վրաց հոգևորականութեան համագումարին մասնակցելուց, դիմել են սինօդի օբէր-պրօկուրօրին մի պետիցիայով, որով խնդրում են, եթէ վրաց եկեղեցուն աւտօկէֆալութիւն տրվելու լինի, Անդրկովկասում հաստատել արքեպիսկոպոսութիւն։

—

Գլխաւոր բանտային վարչութիւնը վերջին ժամանակներս սկսել է ստանալ վերին աստիճանի բնորոշ զեկուցումներ, որ քրէական և քաղաքական կալանաւորների մէջ մի քանի բանտերում անօրինակ անտագօնիզմ է նկատվում։ Այդպիսի զեկուցումներ ստացվել են Չերնիգովի, Կուրսկի, Վորօնէժի, Դվինսկի, Պերմի, Անանիէվի և այլ տեղերի բանտապետներից։ Ուշագրաւ է, որ միաժամանակ ոստիկանական դեպարտամենտը սկսել է ստանալ պօստով ու հեռագրով հաւաքական գանգատներ քաղաքական կալանաւորներից, որ բանտային վարչութիւնը գրգռում է քրէական յանցաւորներին քաղաքականների դէմ։ Այդպիսի հաւաքական հեռագիրներ ստացվել են վերջին ժամանակներս Չերնիգովից, Վորօնէժից, Բենդերից, Կազանից, Կրէմենչուգից և ուրիշ բանտերից։ Կուրսկի բանտ ու այդ գրգռումը հասցրեց այն աստիճանին, որ քրէական կալանաւորները յարձակվեցին քաղաքականների վրա, որի միջոցին քաղաքականներից մի քանիսը թեթև կերպով ջարդվել էին։ «Дума»

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ցունիսի 14 Թիֆլիսի կայարանից 10-րդ քաղաքամասի ոստիկանատուն բերին մի մարդու գրպանից ժամացոյց հանելու ժամանակ ձերբակալված Գօրու գաւառի բնակիչ 14 տարեկան Իվան Կվէլիաշվիլիին, որը, մի քանի անյայտների հետ միասին զինված յարձակում էին գործել նաև փողոցում Ալէքսանդր Աբաեվի վրա, խլելով նրանից 30 րուբլի։ Աբաեվը նրան իսկոյն ճանաչեց. առանց այդ էլ չարագործը ինքը խոստովանեց իր յանցանքը, բայց իր ընկերներին նա չուզեց մատնել։ Կվէլիաշվիլին դատի է ենթարկված։

—

Ցունիսի 14-ին, ցերեկվայ ժամը 12-ին Միջին փողոցում ոսկեղէնի և արծաթեղէնի խանութ ունեցող Միքայէլ Անդրէասեանը իր աշակերտ Շահպարոնովին տուել էր մաքրելու 26 հատ մատանիներ 130 րուբլու արժողութեամբ։ Աշակերտը օգտվելով խանութատէրի բացակայութիւնից, անյայտացել է, մատանիները հետը վերցնելով։

—

Ցունիսի 14-ին, ցերեկվայ մօտ ժամը 10-ին Սադովայա փողոցի վրա բնակվող Գեգէլէի բնակարանը, նրա բացակայութեան ժամանակ, անյայտ չարագործներ, նման բանալիքով բաց անելով նրա մտել են և գողացել զանազան տեսակ զգեստներ և սպիտակեղէն մօտ 300 րուբլու արժողութեամբ։

—

Թիֆլիսի դատաստանական քննիչը յայտնեց ոստիկանապետին հետևեալ վրդովեցուցիչ դէպքի մասին, «փաէտօնշչիկ № 583, նրան իր որդկերանցով Կրուժօկից տուն հասցնելուց յետոյ, երբ դատաստանական քննիչը վճարեց նրան 30 կոպէկ, կատաղեց և սկսեց յիշոցներ տալ և չը նայելով որ քննիչը համոզում էր նրան բացատրել թէ ինչի դէմ է նա բողոքում, նա շարունակում էր անվայել և վիրաւորական խօսքերի արտասանումը։ Այդպիսի յայտարարութեան պատճառով ոստիկանապետը փաէտօնշչիկին 25 րուբլի տուգանք նշանակեց։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

յունիսի 18-ին

Բաւականին երկար ժամանակ է, ինչ Եւրոպայի հայ ուսանողութիւնը կարիք է զգացել կազմակերպել մի ընդհանուր ուսանողական ընկերութիւն «Եւրոպայի հայ-ուսանողական միութիւն» անունով, մի փաստ, որը ցոյց է տալիս թէ կայ մի ներքին անհրաժեշտութիւն իրարից ցրիւ-ցրիւ եկած ուսանողական խմբերի մէջ մի կապ հաստատել, միասին որոշ խնդիրներ քննել և պարզաբանել, խնդիրներ, որոնցով այնքան հարուստ է ուսանողական և թէ մեր հասարակական կեանքը։ Լինելով այսպէս, ինձ համար հանելուկ է մնացել, թէ ինչպէս մինչև օրս այդ ուսանողական միութիւնը կարիք չէ զգացել մի թերթ ունենալ, ուր անդրադառնալ կարողանայ ուսանողական կեանքը իր այրող խնդիրներով և որը մեծապէս նպաստել կարող էր հէնց նոյն միութեան նպատակներից ամենագլխաւորի իրագործմանը. «բարոյական կապ հաստատել Եւրոպայի հայ ուսանողների և ուսանողական խմբերի մէջ։» Տարեկան մի համագումար կազմակերպելը, որը միշտ էլ չէ լինում, դեռ մի բարոյական կապ չէ և շատ չնչին նշանակութիւն է ունենում այդ բարոյական կապի հաստատմանը և ինչպէս տեսնում ենք, միութեան նպատակի առաջին կէտը կազմող ցանկութիւնը մնում է իբրև սիրուն ցանկութիւն։ Այն ինչ այդ նպատակին կարելի էր հասնել աւելի հեշտութեամբ, եթէ այդ միութիւնը ունենար մի ուսանողական թերթ, որը հրաշալի կապ հաստատել կարող էր նրա ցրված ճիւղերի մէջ։

Որքան մեզ հետաքրքրում է, օր., թէ ինչ են անում Ֆրանսիայի, Շվէյցարիայի և այլ երկրների ու քաղաքների ուսանողութիւնները, թէ ինչ ժողովներ են ունենում, այդտեղ ինչ հարցեր են քննվում, ինչ դասախօսութիւններ են կարդացվել, ինչ նորանոր դէպքեր են պատահել ուսանողական կեանքում և այլ նման բազմաթիւ խնդիրներ, որոնցով այնքան շահագրգռված պէտք է լինի ամեն մի իսկական ուսանող, իսկ այդ իղձերին բաւականութիւն տալ կարող է միայն ուսանողական թերթը։

Թերթի օգուտը մի այլ տեսակէտից. ընդհանրապէս ուսանողութեան և մանաւանդ մեր հայ ուսանողութեան մէջ առաջանում են այնպիսի կարևոր հարցեր, որոնք հասարակական մեծ նշանակութիւն ունեն և անհրաժեշտ է ընդհանուր կերպով լուծել այդ հարցերը. օր., անցեալներում Կովկասը արեան և կրակի մէջ էր, գիւղեր քաղաքներ այրվում, ոչնչանում էին, սիրելիների արիւնը թափվում էր. բնական էր, որ այդ հանգամանքում ուսանողութիւնը անտարբեր մնալ չէր կարող և ինչպէս յայտնի է, զանազան քաղաքների ուսանողութեան մէջ քննվում էր Կովկաս դառնալու հարցը և այդ խնդրի մասին նոյն իսկ դիմումներ եղան զանազան թերթերի, այն ինչ եթէ լինէր մի ուսանողական թերթ, հարցը աւելի ընդհանուր բնաւորութիւն կը ստանար և կը քննվէր զանազան ուսանողութիւնների կողմից զանազան տեսակէտներից, որը խնդրի լուծման լրջութեան համար մեծ նշանակութիւն ունենալ կարող էր։ Ընդհանուրի քննութեանը կարօտ հարցեր շատ յաճախ են պատահում ուսանողական կեանքում, որոնց լուծմանը ուղղութիւն կարող էր տալ թերթը։

Միմիայն այս չէ ուսանողական թերթի անելիքը. փաստ է, որ օր օրի վրա մեծանում է արտասահման գնացող ուսանողների քանակը, աւելի մեծ է այն անհատների թիւը, որոնք աւարտելով միջնակարգ դպրոցներ՝ ցանկանում են Եւրոպա անցնել, սակայն չը գիտեն, իրանց ընտրած առարկաների համար որ երկիրը կամ քաղաքն է նպատակայարմար, կեանքը որքան է թանգ, ամսական որքան րուբլի բաւական է ապրելու համար և այլ նման մանր-մանր հարցեր, որոնց լուսաբանութիւնը այնքան յարմարութիւններ կը տար արտասահմանում ուսանել ցանկացող պարոններին։ Թերթում կը գրվի զանազան քաղաքների համալսարանական նորութիւնների, ընդունելութեան նոր պայմանների մասին և այլ նման հարցեր, որոնք ոչ միայն նորեկների, այլ և հին ուսանողների համար ևս շահեկան են։

Եւ, վերջապէս հասարակութիւնը չէ՞, որ հետաքրքրված է իր ուսանողութեան կեանքով. թէ նա ինչ է անում, ինչ դրական կամ բացասական կողմեր ունի նա այժմ, հետաքրքրութիւն, որը այնքան իրաւացի է և ուստի ուսանողութիւնը պարտաւոր է աշխատել իր թերթում դնել իր կեանքի պատկերը հասարակութեան առաջ։

Լինելով այսքան հիմքեր ուսանողական թերթ ունենալու, զարմանալի է, թէ ինչպէս ուսանողական անցեալ համագումարը մերժում է թերթ ունենալու խնդիրը, առանց երկար ու բարակ քննելու հարցը։ Լայպցիգի ուսանողներից մի խմբակ վճռել է եկող ձմեռվայ սեմեստրին ձեռնարկել ուսանողական մի թերթի հրատարակութեան։ Լայպցիգում ամեն յարմարութիւն կայ թերթ հրատարակելու, սակայն հայերէն տպագրութիւնը մի փոքր թանգ է։

Սակայն Լայպցիգի ուսանողների համար աւելի ցանկալի է, որ այդ գործը իր վրա վերցնէր Ուսանողական Միութիւնը, որը աւելի յարմարութիւններ ունի և ծախքերի աւելի դիմանալ կարող է, քան ուսանողական մի փոքրիկ խմբակ. ուստի ցանկալի է, որ յաջորդ համագումարին դրվէր և ընդունվէր ուսանողական թերթ ունենալու խնդիրը՝ իսկ մինչև համագումարի հաւաքվելը, որը երկար տևել կարող է, աւելի յարմար է թերթի հրատարակութեանը ձեռնամուխ լինէր Ժնևի հայ ուսանողութիւնը, որը զգալի առաւելութիւններ ունի այդ գործը ձեռնարկելու համար, քան Լայպցիգինը, որը պատրաստ է ամեն կերպ, թէ գրական աշխատանքներով և թէ դրամական օգնութեամբ նպաստել այդ համակրելի գործի գլուխ գալուն։

Ցանկալի էր իմանալ ընկեր-ուսանողների կարծիքները այս հարցի մասին։

Ուս. Գ. Էգիլեան

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 յունիսի։ (Ցունիսի 13-ի նիստը. այս հեռագիրը ուշացել է)։ Քննվում է կօզակների մասին հարցապնդում անելու հարցը։

Կրիւկօվը ցոյց է տալիս, որ կօզակները զինուորական ծառայութիւն վարելու պատրուակով հեռացված են իրանց ընտանիքներից և տնտեսութիւնից, և վարում են այնպիսի ծառայութիւն, որ իրանց անուան նախատինք և ամօթ է բերում։ Երդման իսկական էութիւնը հիպնոզացման միջոցով կոյր գործիքի է փոխվում իշխանութեան կամքին, մարդը դառնում է կենդանի մեքենայ, որը ոչ միշտ պէտք է գալիս յաղթելու կուի դաշտում, բայց որը մի և նոյն դէպքում խաղաղ ժամանակ զարհուրելի զէնք է իշխանութեան ձեռքում։ Հռետորը մանրամասն պատմում է կօզակների համարեա ¼ դար ապրող այդ գերագոյն անսանձկերպ դասի քաշած ծառայութեան ամբողջ ծանրութեան և անտանելիութեան մասին։ Զէմստվոյային պետերի խնամակալութիւնը ոչինչ է համեմատած զինուորական պաշտօնեաների հետ։ Կազակը հայրենիքի բեմի վրա անցնում է ոչ միայն իր երիտասարդութիւնը, ոյժը և առողջութիւնը, այլ և սպառազինութիւն, որ յաճախ կլանում է—երիտասարդներին զինուորական ծառայութեան ուղարկելու ժամանակ—մի շարք սեզոնների աշխատանքներով համախմբված կօզակների ընտանիքների ամբողջ արժանապատւութիւնը։ Կազակները, որ միաժամանակ փախել են պաների (լեհական իշխաններ) ստրկութեան բռնութիւններից և անհատականութեան և քաղաքացիական կոււում յետ են կասել, որի համար ներկայումս կուի է մղում ռուս ամբողջ ժողովուրդը, ճնշվածների և հալածվածների պաշտպանութեան դերից դարձան ճնշող և հարստահարող։ Ճիշտ է, եղան մի քանի դէպքեր, որ կօզակները բողո՛ք յայտնեցին, սակայն, այդպիսիները ենթարկվեցին քաղաքական պատժի։ Ցամենայն դէպս կօզակների քաջագործութիւնները չքանում են Զիտենի, Պրէսնէնսկի և Սիբիրի հեռոնների փառքի լուսափայլ ճաճանչներում։ Ծանր է, շատ ծանր այժմ կօզակների տնտեսական դրութիւնը. կառավարութիւնը անցեալ տարվայ ամբողջ ընթացքում կրկնակի կողոպտեց Դոնի զօրքին, նրան հարիւրաւոր դեսատին հողերը կալուածատիրական և չինովնիկական հողեր դարձնելով։ Այժմ հարց է ծագում, ե՞րբ արդեօք կարձակվեն 2-րդ և 3-րդ հերթի գնդերը։ Ե՞րբ արդեօք կերակրողները պէտք է իրանց ընտանիքների մօտ ուղարկվեն։ (Անվերջ ծափահարութիւններ)։

Վասիլևը հիմնվելով հիմնական օրէնքների 14-րդ գլխի վրա—ներկայ հարցապնդումը՝ Բարձրագոյն իշխանութեան իրաւասութիւնը խախտել է համարում։ Նախագահը յայտնում է հռետորին, որ վիճաբանութիւնները ղեկավարելու իրաւունքը նախագահին է պատկանում։ Ներկայ դէպքում բոլորովին օրինացի է հարցապնդում անել, ինչ օրէնքով է արդեօք առաջնորդվում կառավարութիւնը. (բուռն ծափահարութիւններ)։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

14 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Չափաւորների կուսակցութեան պարլամենտական ֆրակցիայի մէջ, որի լիդէրն է հանդիսանում կոմս Հէյդէնը,—միտք է յղացել կազմելու «Խաղաղ զարգացման լիգա»։

Նաւահանգստային բանուորների գործադուլը վերջացաւ։ Կովկասի պատգամաւորները, որ մասամբ միացան աշխատաւոր խմբակին, այժմ անկախ աշխատաւորների խմբակից կազմել են սօցիալ-դեմօկրատական խմբակ, որն ի միջի այլոց, մտադիր է գործել աշխատաւորների հետ միացած։ Թագաւոր Կայսրը խիստ յանդիմանութիւն է ուղարկել Պրէօբրաժէնսկի գնդի հրամանատար Գադօնին, որ չէ կարողացել 1-ին բատալիօնում ներքին կարգ ու կանոնը պահպանել։

ՀՌՈՄ։ Պատգամաւորների պալատում արտաքին գործերի մինիստրի օգնականը պատասխանելով սօցիալիստ պատգամաւորներից մէկի հարցապնդման, թէ արդեօք ինքը մինիստրը արժէ՞լ է որևէ իրական բան յօգուտ ներկայումս Պետերբուրգի բանտում հիւծող իտալացի ուսանող Կարֆֆի,—բացատրեց որ Կարֆֆին ընդունել է ռուսահպատակութիւն և ենթարկվել է դատաստանական մեղադրանքի դաւադրութեան մասնակցելու համար, բայց և այնպէս իտալացի դեսպանի միջնորդութեամբ Կարֆֆին ժամանակաւորապէս ազատ է թողնված։

ԲԵՐԼԻՆ։ Երէկ Րէյխստագի անդամ ազատամտածող Շրադերի նախագահութեամբ կայացաւ մի բազմամարդ ժողով՝ բողոքելու համար Ռուսաստանում կատարվող հրէական ջարդերի դէմ. ժողովը միաձայն որոշեց. «Համակրութիւն յայտնել ջարդի զոհերին, իսկ նրա հեղինակներին՝ զայրոյթ և ատելութիւն»։ Այդ վճիռը ուղարկվելու է Դումայի նախագահին։ Որոշված է նաև, հրէական հարցը որպէս համաեւրոպական հարց՝ յանձնել Հաագի կոնֆերենցիայի քննութեան։

ՊԼՕՑԿ։ Հացթուխների գործադուլը վերջացաւ։

15 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 յունիսի։ Ժողովրդական ազատութեան կուսակցութեան կենտրոնական կոմիտէտը որոշել է դիմել ազգաբնակութեան, մի ընդարձակ հաշվետու կայացնելով Պետական Դումայի գործունէութեան մասին, և պարզել ժողովրդական ազատութեան նշանակութիւնը և Դումայի աշխատանքների ուղղութիւնը։ Ներքին գործերի մինիստրը հաւաստիացրել է ժողովրդական ազատութեան կուսակցութեան, որ կուսակցութիւնը պէտք է համարել օրէնքով գոյութիւն ունեցող, և իրաւունք ունի գործել քաղաքապետի տուած կանոնադրութեան համաձայն։—Կառապանների գործադուլը վերջացաւ։

ԼՕՆԴՕՆ, 14 յունիսի։ 9 ժամ 45 րօպէին Ուէլսի հարաւում երկրաշարժ զգացվեց, որ շարունակվեց 3 վայրկեան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 յունիսի։ Կայացաւ մուսուլմանական պարլամենտական ֆրակցիայի հիմնադիր ժողովը. Ֆրակցիան շատ մօտ կերպով յարաբերութեան մէջ է ժողովրդական ազատութեան կուսակցութեան հետ, որ տեղական ինքնավարութեան և ծայրագաւառների հարցերի նկատմամբ կադէտներից աւելի ձախակողմեան է։ Ֆրակցիան հակառակ է պետական հողային ֆոնդ կազմելուն և կողմնակից է երկրային հողային ֆոնդեր կազմելու հարցին. ագրարային հարցը տեղերում լուծելով հանդերձ, ֆրակցիան պահանջում է կանանց և տղամարդկանց իրաւունքների հաւասարութիւն, միայն այն չափով, ինչ չափով շարիաթն է պահանջում։ Ֆրակցիայի լիդէրը Թօփչիբաշէվն է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Կ. Մ. ՁԻՆՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի. ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱՐԽԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Ի. Կ. ԳՁԷԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ՆԱՐԱԳՈՒՅԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇԷՆԲՐԻՆԻՆԱ—1½—3 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ե. ԳՈՒՐԳԵՆՈՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Խ. Գ. ԱԲԽԱՆՑ—5—6 ժ. ներքին հիւանդ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՈՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ.
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ—7—7 և կէս ժ. ներքին և երեխայոց հ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Հիւանդանոցի [illegible] և օպերացիայի համար սենեակներ։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
մշտական մահճակալներով։
Ելիզավետպոլսկի փողոց, 101, տելէֆօն 1026
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր։
Մ. Գ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ 1—2 ժ.—միզասեռական, կաշվի և սիֆիլիս։
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—Ջղային, ներքին և ելեկտրո-բուժութիւն։
Գ. Ն. ԴԻՄԻՏՐՈՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Գ. Հ. ՔԱԴԻԼՈՒՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ.
Մ. Գ. ԿԻՄՕՆՏ 1—2 ժ. վիրաբուժական հ.
Մ. Մ. ԷԼՉԻԵԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի։
Գ. Ա. ԲԷԲԷՐ—երեխայոց և ներքին հ.
Հիւանդանոցում բժշկվում են հիւանդներ միկրօսկոպիական, բակտերիօլոգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և ստնտուներ (кормилица) ընտրութիւն։ Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ.։ Օպերացիայի և հիւանդանոցի վճարը ըստ համաձայնութեան։ Դիերեթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին համարներից։
(չ.ու.կ.) 68—100

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Մասնագէտ ներքին և երեխայոց հիւանդութիւնների։ Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առաւ. և 5—6 երեկ.
Միխայլովսկի պր. տ. Ճաճանիձէի № 36.
(կ.չ.ու.) 20—50

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Գ. ՁԱԽԱՐԲԷԳԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ՋԵՐՎԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ
Ընդունում է առաւօտեան ժամի 10—12-ը և երեկոյեան ժամը 6—7։ Լերմոնտովսկայա փողոց, տուն № 16։ Տէլէֆօն № 1087։
(ա. օ.) 46—50

Ե Ր Կ Ա Թ Ո Ւ Ղ Ի

(Ամառային գնացքների երթևեկութիւնը)

(Ժամերը նշւած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով).

	Փոստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ. 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 26 » »	5 ժ. 25 ր. առ.	1 ժ. 30 ր. գիշ.	9 ժ. 37 ր. երեկ.
Թիֆլիսից դուրս գնալը	12 » 26 » »	6 ժ. 01 ր. առ.	—	—
(Թիֆլիսի ժամանակով)	1 » 24 » »	6 ժ. 59 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 38 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 22 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 39 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 37 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 35 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գիշ.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. գիշ.
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 18 ր. գիշ.
Ալէքսանդրոպոլից դուրս գալը	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 06 » առ.	—	—	4 ժ. 49 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 12 » գիշ.	—	—	3 ժ. 25 ր. ցեր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 10 » »	—	—	4 ժ. 23 ր. ցեր.
Ալէքսանդրոպոլից դուրս գալը	10 » 30 » առ.	—	—	2 ժ. 47 ր. գիշ.
Երևան հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	6 ժ. 10 ր. գիշ.
Կր հասնելը	4 » 23 » »	—	—	8 ժ. 48 ր. առ.

ԲԱՑՎԱԾ Է 1906 Թ. ՅՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
„ՆՈՐ ԿԵԱՆՔ“
Գրական, հասարակական և քաղաքական շաբաթաթերթ, որ հրատարակվելու է Նոր-Նախիջևանում։
«Նոր Կեանքը» լինելու է առաջադիմական և պատկանելու չէ որ և է կուսակցութեան։
Շաբաթաթերթիս բաժինները են 1) Առաջնորդող. 2) Ժամանակակից հարցեր. 3) Տեղական կեանք. 4) Գաւառական կեանք. 5) Գրական բաժին (ինքնուրոյն և թարգմանական յօդուածներ, բելլետրիստիկա, բանաստեղծութիւն և այլն). 6) Արտասահմանի կեանք. 7) Քրոնիկոն. 8) Մամուլ. 9) Թատրոն և գեղարուեստ. 10) Շաբաթվայ լուրեր. 11) Գրախօսութիւն. 12) Թղթակցութիւն. 13) Խառն լուրեր. 14) Յայտարարութիւններ։
Գինն է յուլիսի 1-ից մինչև տարվայ վերջը 2 րուբլի։
Հասցէ՝ Нахичевань На-Дону 1-ая Соборная ул. № 23։
8—12 (կ. ե. հ.) Հրատարակիչ՝ Գր. Բեգլեան

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ի. ԳՈՒՐԳԵՆՈՎ
Խարկովի համալսարանի մանկաբարձական և գինեկօլոգիական կլինիկայի նախկին օրդինատոր (պրոֆ. Տօլոչինովի), ընդունում է մանկաբարձական և կանանց հիւանդութիւններ ունեցող հիւանդներին։ Ընդունելութիւնը ցերեկվայ 10—1 ժամը։ Գոլովինսկի պր. տուն Մդիվանի № 12։
(կ.չ.ու.) 10—15

ԱՄԱՌԱՆՈՑ
ԲԷԼԻ-ԿԼԻՉԻՈՒՄ
Հայոց դպրոցի շինութեան վերին յարկը բաղկացած հինգ սենեակից խոհանոցով, տրվում է մատչելի գնով։ Դիմել նամակով կամ անձամբ Բէլի-կլիչ՝ Գէորգ Բայրամեանց։
(ե. չ. հ. ու.) 4—4

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Ընդունում է հիւանդներ հանքային ջրերում. Կիսլօվոդսկ հիւանդանոց Ռոսսիա № 14. վեներական և մորթու հիւանդութիւններ։ Гостиница Россія № 14.
3—20

ԲԺԻՇԿ
Լևոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշվի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գոլովինսկի պրօսպէկտի և Կաղեասկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կաղեասկի փողոցից № 2.
(ա. օ.) 175—300

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
և վաճառվում է Թիֆլիսի բոլոր գրավաճառանոցներում
ՀԻՒԱՆԴ ՄԱՐԴԸ
(Բ. Շտերն)
Կուլտուրական պատկերներ Թիւրքիայից։ Գերմաներէնից թարգմ. Լևոն Բաբայեան։
(ա.օ.) 2—5

ԵՐԵՒԱՆ քաղաքի ս. Ցովհաննէս եկեղեցու համար ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ երկու քահանայացուներ, որոնք պէտք է ունենան Գէորգեան ճեմարանի կամ թեմական դպրանոցի աւարտման վկայագիր։ Ցանկացողները կարող են դիմել Երևան՝ նոյն եկեղեցու ծխականներից ընտրված քահանայական յանձնաժողովի անդամ պ. Միքայէլ Աթանասեանին։
2—6

ՍԱՄԱՐՂԱՆԴԻ Աղօթարանի համար հարկաւոր է մի փորձված տիրացու, որը պարտաւոր է լաւ իմանալ եկեղեցական երգեցողութիւնը։ Պայմանների համար պէտք է դիմել. Самаркандъ Н. С. Ситарову.
(ա.օ.) 2—3

Գանձակում տեղի ունեցած բռնկումների պատճառով ես տեղափոխեցի իմ կենտրոնական ՀԻՐԱՆՈՑԸ չքեղ կահկարասիներով Թիֆլիս, Պուշկինսկի փողոցի վրա № 23, պրավօսլաւնի հոգևոր սեմինարիայի դիմաց
„ՆՈՄԵՐՍ ՑԵՆՏՐԱԼ“
մականունով։ Գները 70 կոպէկից մինչև 2 րուբլի։ Ամսական ցանկացողների հետ առանձին պայմաններով։
Ալէքսանդր Ցարութիւնով
(հ. կ. ե.) 25—100

Լոյս տեսաւ
Հայոց Ազգագրական Ընկերութեան
հրատարակութեամբ
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ
Եռամսեայ, պատկերազարդ հրատարակութեամբ
1906 Թ. №№ 1 և 2 առանձին-առանձին
Բաժանորդագինն է տարեկան 5 ր., կէս տարվան 3 ր.,—3 ամսվան 1 ր. 50։
Դիմել՝ Въ Редакцію журнала «Азгагракань Андесъ». Тифлисъ.
3—3

Լոյս տեսաւ
ԱՌԱՔԵԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ
ԱՌԱԿՆԵՐԸ
Գինը 50 կոպէկ
Ծախվում են «Կենտրոնական» և «Գուտենբերգ» գրավաճառանոցներում։
(հ. չ. ե.) 4—6

Հին-Նախիջևանի հայոց երկսեռ ...տական դպրոցի հոգաբարձութիւնը առաջիկայ 1906/7 ուսումնական տարվայ համար հրաւիրում է երկու գիմնազիաւարտ վարժուհիներ ռուսաց լեզուի, թուաբանութեան ու ձեռագործի համար։ Հարկաւոր է նաև մի ճեմարանաւարտ կամ Ներսիսեանաւարտ ուսուցիչ, որը պէտք է աւանդէ ուրիշ առարկաների հետ ձայնագրութիւն և ղեկավարէ եկեղեցական քառաձայն խումբը։ Ցանկացողները թող դիմեն հոգաբարձութեանս մինչև առաջիկայ յուլիս ամսի 20-ը։
Ի դիմաց հոգաբարձութեան Մամիկոն Ղազարեան Մելքիսեդեկեան։
3—3

ՄԻ ընտանիք, որի համարեա բոլոր անդամները հիւանդ են, շատ նեղ վիճակի մէջ է գտնվում, և խնդրում է բարերարներից, ուշադրութիւն դարձնել, օգնութիւն հասցնելով։ Նուէրները ուղղել հետևեալ հասցէով Петхаинская ул. № 2, д. Степанова. Ал. Сарибекянъ կամ «Մշակի» խմբագրութեան։
3—2

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ
Տրվում են վարձու Պուշկինսկի փողոցի վրա Թիֆլիսի Քաղաքային Վարկի Ընկերութեան տանը յուլիսի 1-ից, տասն մէկ (11) և հինգ (5) սենեակներից բաղկացած ամեն, յարմարութիւններով։ Պայմանների մասին դիմել ընկերութեան գրասենեակը։
2—3

ՄԻ ՕՐԻՈՐԴ, որը աւարտել է գիմնազիայի դասընթացքը ոսկէ շքանշանով, 6 տարվայ փորձառութեամբ, որոնում է դասեր կամ գրասենեակային պաշտօն։ Հասցէն՝ Тумановская ул. № 36 հարցնել Գօգլօեվին։
2—3

ԲԺՇԿԱՊԵՏ
Ի. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային, վեներական և սիֆիլիսական հիւանդութիւնների. ընդունում է հիւանդներին ամենայն օր, առաւօտեան 12—1 ժամը, իսկ երեկ. 6-ից մինչև 8-ը։ Կուկիա Սեմեօնովսկի փողոց № 16։
(ու. կ. ե.) 18—20

Անյայտացաւ հոգեկան հիւանդ ...տրական տրամվայի նախկին կօնդուկտոր ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ԻՄՆԱՇՎԻԼԻՆ։ Ով նրա մասին որևէ տեղեկութիւն ունի, խնդրում ենք յայտնել հետևեալ հասցէով Ланчхуты (Кут. губ.) Онуприю Имнашвили. Ծախսերը կը վճարվեն։
(չ.ու.կ.ե.) 2—4

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկի ձեռնարկ մայրերի և դաստիարակչուհիների համար. 77 երգ շարժական խաղերով. 112 օրինակներ աշխատանքի համար.—գինն է 3 ր. 10%—յատկացրված է հայ որբախնամներին օգտին։ Դիմել Թիֆլիս, Սօլօլակ, Փաւլովի փողոց, № 13։
(հ. կ. ե.) 26—28

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից » 7
Վելեամինովսկայա փողոց № 8։ (ե.ու.) 78—100

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.
Электропечатня типографскаго Т—ва «Гермесъ» Мадат. ул. № 5